

**Թուրքագիտական եւ
օսմանագիտական
հետազոտություններ**

**Туркологические и
османистические
исследования**

**Turkish and Ottoman
Studies**




ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիա
Արևելագիտության ինստիտուտ

Թուրքագիտական եվ օսմանագիտական
հետազոտություններ

Ռուբեն Սաֆրաստյանի
ընդհանուր խմբագրությամբ

III

A II
90470



Երևան
2005


Национальная Академия Наук
Республики Армения
Институт востоковедения

**Туркологические и османистические
исследования**

**Под общей редакцией
Рубена Сафрастяна**

III

07402
II
A




Ереван
2005

Armenian National Academy of Sciences
Republic of Armenia
Institute of Oriental Studies

**Turkish and Ottoman
Studies**

**Editor
Ruben Safrastyan**

III



Yerevan
2005

ՀՏԴ 93/99

ԳՄԴ 63

Թ. 988

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գիտական խորհուրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ.

պ.գ.թ. Ռուբեն Սաֆրաստյան (նախագահ), պ.գ.թ. Սուրեն Բադդասարյան, պ.գ.դ. Ալբերտ Խաչատրյան, պ.գ.դ. Պավել Չոբանյան, Արտակ Ծաքարյան (պատասխանատու քարտուղար)

Մեկնաստությամբ Նոբիկ Խաչիկյանցի (Բրդբլի, ԱՄՆ)

Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ.-Եր.: «Լուսաբաց հրատարակչատուն»,
Թ 988 2005-112էջ

“Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ” մատենաշարի III հատորում ընդգրկված հոդվածներում լուսաբանվում են Օսմանյան կայսրության միջնադարյան ու նոր պատմության, Հայկական հարցի, ցեղասպանագիտության, ինչպես նաև ներկայիս տարածաշրջանային հարաբերությունների հետ առնչվող հարցեր:

Նախատեսվում է հասարակագնությունների, դիվանագնությունների, ուսանողների համար: Օգտակար կլինի նաև Թուրքիայի, Հայկական հարցի, ցեղասպանության պատմությամբ և միջազգային հարաբերություններով հետաքրքրվող ընթերցողների լայն շրջանակների համար:

Թ $\frac{0503000000}{0147(01)-2005}$ 2005

ԳՄԴ 63

ISBN 99941-37-42-5

© Հեղինակային խումբ

ԲՈՎԱՆՈՂԱԿՈՒԹՅՈՒՆ

Պատմություն	6
Արտակ Շաքարյան	
Մարդկային ռեսուրսների կառավարումը մահմեդական աշխարհում մինչև օսմանյան պետության կազմավորումը..	6 ✓
Արտաշես Ծախնազարյան	
Իրադրությունն Անդրկովկասում Ջալալ ադ-Դինի արշավանքների նախօրյակին	16
Ռուբեն Մաֆրաստյան	
Նախացնդասպանություն (proto-genocide). տևություն և պատմության խնդիրներ (Օսմանյան կայսրության օրինակով)	26
Рем Казанджян, Смбат Азнаурян, Диана Григорян	
Некоторые аспекты рассмотрения армянского вопроса на переговорах в Брест-Литовске (1918 г.)	48
Տարածաշրջանային խնդիրներ.....	73
Nikolay Hovhannisyan	
The NATO-Armenian Relations in the Context of the NATO Enlargement	73
Արամ Հարությունյան	
Ռազմաքաղաքական հավասարակշռության խաթարման գործոնները տարածաշրջանում.....	80
Ruben Safrastyan	
The Genocide Issue as a Factor of Armenia's Foreign Policy	95
Համառոտ տեղեկություններ հեղինակների մասին.....	95

ԱՐՏԱԿ ՇԱՔԱՐՅԱՆ

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՄԱՅՍԵ-
ՂԱԿԱՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ ՄԻՆՉԵՎ ՕՍՄԱՆՅԱՆ ՊԵՏՈՒԹ-
ՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

Դեռ Մաքիավելլին, որը Օսմանյան կայսրությունը համա-
րում էր «թագավորի ու իր ծառաների կողմից» կառավարված
թյուրոկրատական պետության լավագույն օրինակ՝ ի տարբե-
րություն իր օրերի Ֆրանսիայի, որն ավատատիրական պե-
տություն էր՝ ղեկավարված «թագավորի ու բարոնների կող-
մից»¹: Եվրոպացի քաղաքական մեկնաբանները հույժ հե-
տաքորքված են նդել Օսմանյան կայսրության կառուցվածքով,
որն այդքան տարբերվում էր իրենց քաղաքական ավանդույթ-
ներից: Մաքիավելլիի՝ Օսմանյան կայսրության կառուցվածքի
մեկնաբանության մեջ չկա ոչ գովաբանում, ոչ քննադատույթ-
յուն. նա պարզապես ցանկություն ունի տարբերակել և համե-
մատել պետության նրկու տիպ ու ցույց տալ, որ առաջին դեպ-
քում դժվար կլինի գրավել, սակայն դյուրին՝ պահել գրավածը,
իսկ ավատատիրական պետության դեպքում, ընդհակառակը,
դյուրին կլինի գրավել, սակայն դժվար պահել: Համաձայն
Մաքիավելլիի՝ հանգուցային տարբերությունը պետության
անձնակազմի մեջ է. Օսմանյան կայսրությունում պաշտոնյա-
ները «բոլորը ստրուկներ են ու կախյալ» սուլթանից, իսկ
Ֆրանսիայի թագավորը «շրջապատված է բազմաթիվ ազնվա-
կաններով»²:

Մի քանի սերունդ հետո Օգիեր դե Բուսբերը, որը նրկու ան-
գամ նդել է կառլ V-ի դեսպանը Սուլեյման II Զանունիի (Փա-
ռահեղի) արքունիքում³, առաջինն էր, որն անձամբ ուսումնա-
սիրել էր Օսմանյան պետությունը: Նա կատարել է նման տար-
բերակում, սակայն այլ համատեքստում: Նա տարբերակել է
եվրոպացի ղեկավարներին, որոնք կախված են իրենց ազնվա-
կանությունից, ու օսմանյան սուլթանին, որը տներն է իր հաա-

րական կառույցներում աշխատող ստրուկներին: Բուսքերը մեկնաբանել է, թե համակարգում ազնիվ արյան պակասը թույլ էր տալիս սուլթանին ընտրել իր ստրուկներին ու առաջ քաշել համաձայն իրենց կարողությունների⁴: Թերևս առաջին հայացքից մերիտոկրատիա թվացող համակարգը հիացնում էր նվորապացի դիտորդներին: Վերածննդի ժամանակակիցները հիանում էին հնքիաթային սցենարով, նրբ հովիվը տնասկանորդն կարող էր դառնալ վեհաշուք մեծ վեզիր:

Այն, ինչ Օսմանյան կայսրությունում գարմացնում էր նրանց, վաղուց հաստատված համակարգ էր մերձավորարևելյան մահմնդական պետություններում: Այստեղ լայն տարածում ուներ մամլուք նրևույթը, նրբ անտոհմ ստրուկը կարող էր հասնել դեկավար պաշտոնների:

Մամլուքների* ռազմա-ստրկական ինստիտուտը բացառապես մահմնդական նրևույթ է: Ամեն դեպքում այն մահմնդական աշխարհից դուրս չունի հիշատակելու արժանի զուգահեռ:

Մամլուքյան նրևույթի հիմնական պատճառը փնտրում են հենց մահմնդականության բնույթի ու նրա նվաճումների մեջ. մահմնդական կրոնի նպատակն է ողջ աշխարհի մահմնդականացումը՝ գլխավոր միջոց ընդունելով զենքի ուժը: Հետևապես, այն, ինչ արդեն նվաճվել էր մահմնդականների կողմից, անվանվում էր Դար ալ-Իսլամ (իսլամի աշխարհ), իսկ այն, ինչ դեռ պետք է նվաճվեր՝ Դար ալ-Հարբ (պատերազմի աշխարհ): Մի կողմից իսլամի գոյության վաղ տարիներին նրա լայն տարածումը, մյուս կողմից նվաճողական հիմնական գաղափարին մահմնդականների նվիրումը անմիջապես ստեղծեցին մի շատ լայն անդունդ գրավյալ տարածքներում կայազորելու ու հետագա գործողությունների համար անհրաժեշտ ռազմուժի աճող կարիքի և Արաբական թերակղզում առկա բավականին սահմանափակ մարդկային ռեսուրսների միջև:

Անհրաժեշտ ռազմուժի սակավության խնդիրը սուր դարձավ արդեն խալիֆ Օմարի օրոք: Լուծումը բաղկացած էր իրար ամբողջացնող նրկու տարրից: Խալիֆ Օմարը հրամայեց ամենագրավիչ պայմաններով որպես մահմնդական ռազմուժ հավաքագրել պարտված թշնամական միավորներին, ինչպես նաև մահմնդական նվաճողների մահմնդականացված ու ազատ արձակված նախկին ստրուկներին: Ընդ որում վերջին-

ենքս հավասար էին համարվում իրենց նախկին տներն ինքն⁵:

Այս ամենը ցույց է տալիս, թե ինչ ծայրաստիճան կարիքի մեջ էին մահմեդականները Արաբական թերակղզուց իրենց տարածման սկզբնական փուլում, քանզի իրենց շարքերը համալրում էին ոչ-արաբ ռազմուժով: Նման քաղաքականությունը մատնանշում է նաև այն ուղղությունը, որտեղից իսլամը հետադարձ սկսեց հավաքագրել իր գլխավոր ռազմուժը՝ իրանա-խորասանյան շրջան և դրանից այն կողմ ընկած թյուրքական տարածքները⁶:

Փաստորեն, քանի որ մահմեդական պետության ոչ-մահմեդական բնակիչները ունեին զիմիի կարգավիճակ ու չէին կարող ստրկացվել, մամլուքյան համակարգում ստրուկների ավանդական աղթուրը արտաքին աշխարհն էր. ռազմագերիներ ոչ-մահմեդական թշնամիներից, ստրուկներ՝ զնված շուկաներից կամ որպես նվերներ ստացված բարիդրացի և կամ վասսալ կառավարիչներից⁷:

Մամլուքյան նրկության հզորության ու անընդհատ զարգացման համար անհրաժեշտ էր մեկ պայման. մամլուքների անընդհատ մատակարարում: Այդ պայմանի իրականացումը հիմնված էր մարդկանց (էլ չենք խոսում ցեղապետների)՝ իրենց ազգակիցներին, ցեղակիցներին վաճառելու պատրաստակամության վրա⁸: Սա էր ողջ համակարգի հիմքը: Ասպատակումներն ու առևանգումները այդքան էլ էական գործոն չէին, որքան այս վերոհիշյալ պատրաստակամությունը⁹:

Մի քանի դար հետո Փոքր Ասիայում Ռումի Մեջուկյանները բախվեցին նման շատ խնդիրների ու միջավայրի գործոնների, որոնք առկա էին նաև մահմեդական Մերձավոր Արևելքի այլ հիմնական հարստությունների՝ Աբբասյանների, Ղազնևիների, մամլուքների և այլոց մոտ: Նրանք կառավարում էին բազմակրոն, բազմալեզու ու բազմազգ զանգվածներ, որոնք հաճախ նույնքան օտար կամ նորեկ էին, ինչպես և իրենք՝ սեյդուկները: Այս բազմազան միջավայրն ու խնդիրները որոշակիորեն արտացոլվում էին կառավարման համակարգում, որի յուրահատկություններից ամենաառկաառն թերևս կառավարման ու զինվորական կառույցում ստրուկների, ինչպես նաև տարբեր ազգային ռազմական խմբերի օգտագործում էր:

Մեջուկյան ռազմական կառույցում իրենց ուրույն տեղն ու-

նեին խառնածին մահմեդական իդդիշները (*ikdish / iğdiş*), որոնք, սակայն, ունեին գուտ տեղական միլիցիայի գործառնությունը և դուրս էին բանակային կառույցներից: Մելջուկնամեններում խոսվում է իդդիշների հրամանատարների մասին (*Iğdiş başı / Emirülegâdişe*): Վնաաֆի պատմական բառարանում իդդիշ է անվանվում նա, ով միայն մի կողմից է թյուրք: Իբնի Մյուհեննայի բառարանում արաբերեն «*ալ-մելվյուդ*» բառը թարգմանված է իդդիշ: Մելվյուդ ըստ Ախթերիի նշանակում է արաբների մեջ ծնված-մեծացած, սակայն ոչ արաբ: Դրանից հասկանում ենք, որ իդդիշն էլ նշանակում է ոչ հարյուր տոկոսանոց թյուրք¹⁰:

Բլոդ Զայնը ոչ մի հիմք չի տեսնում Մելջուկյանների մոտ կիրառվող այս պրակտիկան գուգահեմեշու դեվշիրմեի* հետ¹¹, որպես պարբերականորեն անցկացվող հարկատեսակի: Սակայն, չնայած չի կարելի նույնացնել դեվշիրմեն Մելջուկյանների համակարգում առկա տարրերի հետ, բայցևայնպես օսմանցիները չեն, որ ծանոթացրել են Փոքր Ասիան ստրկական համակարգի հետ: Այսպես, օրինակ դեռ 1085թ.՝ Անտիոքի գրավման ժամանակ, թյուրքերը մարդկային շնտուրանների պակասորդ ունեին և ուստի բռնի մահմեդականացրեցին հայ ու հույն նրիտասարդները՝ հետագայում գործածելով ըստ պահանջի¹²:

Փոքր Ասիայի Մելջուկյանների մոտ առավել տարածված էր դուլամների համակարգը: Դուլամները* սովորաբար հավաքագրվում էին օտար մշակութային կենտրոնից կամ հեռավոր աշխարհագրական տարածքից նրիտասարդ հասակում, նրբ նրանք բերվում էին արքունիք՝ համապատասխան կրթություն ու պատրաստվածություն ստանալու: Արդյունքում դուլամը, որին պատվաստվել էր ոչ հարազատ մշակույթ, դառնում էր տեսականորեն ավելի հավատարիմ իր տիրոջը, քան տեղացի մահմեդական հպատակները: Բացի այդ նրանք, շնորհիվ իրենց հոգևոր ու խիստ ուսուցման, դառնում էին ավելի լավ զինվորներ ու կառավարիչներ¹³:

Ղեկավարվող տարածքներում ազգայնականության և ընդհանրապես լնգվական, ազգային ու կրոնական միության բացակայության պայմաններում դուլամական համակարգը հասավ նշանակալի նվաճումների, զոհե մինչև XIII դարը: Այնժամ մոնղոլական փոթորկի առջև այսօրինակ համակարգի վրա հիմնված գրեթե հարստությունները քանդվեցին՝ ինչպես խա-

դաթթեանց պատրաստված տնականք: Մյուս կողմից ճշմարիտ է, որ դուլամների նվիրվածությունը այլ էր ու որոշ դեպքերում այն հանգցնում էր հարստությունների անկման և նույնիսկ բերում «ստրկական» հարստությունների վերելքի՝ ինչպես օրինակ Թուլունյանները, Իխշիդյանները, մամլուքները և այլն¹⁴: Թերևս նրկար ժամանակ մահմեդական աշխարհի հյուսիսարևելյան սահմանում բնակվող թուրքմեններն էին համարվում լավագույն դուլամներ՝ մասնավորապես շնորհիվ իրենց ռազմաշունչ ունակությունների: Սակայն դուլամների աղբյուր էին նաև այլ ազգություններ. հնդիկներ, դալամիտներ, տաջիկներ, վրացիներ, հայեր, հույներ, ռուսներ, լատիներ: Շատ հաճախ նրանք ծնք էին բերվում Խորասանի, Կովկասի, Փոքր Ասիայի ստրկական շուկաներում, ստացվում որպես նվերներ¹⁵ իշխողին՝ այլ ազնվականներից, գերվում նվաճումների և ռազմարշավների ժամանակ, ստացվում որպես հարկ:

Ռումի Սելջուկյանները Անատոլիան գրավելուց ու այնտեղ հաստատվելուց հետո բարդ իրավիճակում հայտնվեցին. XII, XIII ու XIV դարերի Անատոլիան դեռ մահմեդականացված ու թուրքացված չէր: Բրիտանյա հույների, հայերի, վրացիների և սիրիացիների ներկայությունը վկայում էր, որ Կոնիայի Սելջուկյանները ևս լոկ մեկ մահմեդական հարստություն էր, որն իշխում էր այդ բազմակրոն, բազմալեզու պետության վրա¹⁶: Բացի այդ անիշխան թուրքմենական ցեղերը, որոնք շատ կարևոր դեր էին խաղում Անատոլիայի գրավման ու բնակեցման գործում, պատրաստակամորեն չէին ծառայում կարգուկանոնին և իշխանությանը¹⁷: Այս պարագայում և նլնելով այդ ժամանակվա մահմեդական կառավարման համակարգի օրինակներից՝ զարմանալի չէ, որ իրթայի համակարգի վրա հիմնված սելջուկյան ուժերի կողքին ծնվեց դուլամների ռազմական ու վարչական համակարգը: Կասկածի ննթակա չէ, որ դուլամները լայնորեն օգտագործվում էին սելջուկների ռազմական ու վարչական համակարգում՝ դառնալով Օսմանյան մանկալավիկանիչներիական համակարգի անմիջական նախնիները¹⁸:

Երիտասարդ դուլամների հիմնական աղբյուրը «պատնրազմի աշխարհն» էր¹⁹. քանի որ սելջուկները պատնրազմներ էին մղում Տրապիզոնի ու Նիկեայի հույների դեմ՝ հյուսիսում ու

արևմուտքում²⁰, Կիլիկիայի հայերի դեմ՝ հարավում²¹, ինչպես նաև Կովկասյան տարածաշրջանի ժողովուրդների²² և Ղրիմի բնակիչների²³ դեմ: Սուլթանները ակնհայտորեն կիրառում էին ավարի մեկ հինգերորդը պահանջելու իրենց իրավունքը համաձայն գանիմաթի օրենքի²⁴: Սակայն ինչպես արդեն նշել ենք, ղուլամները ձեռք էին բերվում նաև այլ ուղիներով: Օրինակ, հնարավոր է, որ ղուլամների մի որոշ մաս ժամանակ առ ժամանակ հարկվում էր սելջուկյան տարածքների հպատակներից, ինչպես հետագայում օսմանյան դեվշիրմենները²⁵:

Քրիստոնյա հույների բազմությունը ղուլամների շարքերում թերևս բացատրվում է Բյուզանդիայի հարևանությամբ ու անընդհատ արշավանքներով, որոնք թույլ էին տալիս գերել անթիվ բնակչություն: Բազմաթիվ են նդել նաև հայ ղուլամները, քանի որ հայերը նդել են թե՛ սելջուկների հպատակներ, թե՛ բազմիցս գերեվարվել են Կիլիկիայի դեմ արշավանքներից²⁶:

Ղուլամները Սելջուկյանների մոտ գրավում էին կարևոր պաշտոններ ու մեծ դեր ունեին քաղաքական կյանքում²⁷: Ղուլամները լայնորեն օգտագործվում էին սուլթանների ու էմիրների կողմից նաև XIII դարի Անատոլիայում: Այսպես, մենք տեղեկանում ենք, որ Խլաթ քաղաքի նվաճումից հետո 1000 արքունի ղուլամներից բաղկացած մի զորամիավորում թողնվում է քաղաքում՝ զործերը համակարգելու համար²⁸: Բացի աղբյուրների ուսումնասիրությունից պարզվում է, որ ղուլամների սովոր գանգվածներ ունեին նաև առավել խոշոր էմիրները, որոնք ընդվզումների ժամանակ օգտագործում էին իրենց ղուլամական բանակները²⁹:

Թե՛ն XIII դարի աղբյուրներում բացակայում է Կոնիայի պալատական անցուղարձի համակարգված նկարագրությունը, սակայն առկա են բավականին տեղեկություններ, որպեսզի պարզ լինի, որ պալատական տարբեր ծառայություններ դեկավարվել են ու իրականացվել ղուլամների կողմից: Գոյություն է ունեցել պալատական դպրոց՝ ղուլամխանե, վեզիրի պալատին կից³⁰, որտեղ նրիտասարդ ղուլամներին կրթում էին բաբանները³¹: Որոշակի փուլում նրիտասարդները նշանակվում էին պաշտոնների, որտեղ նրանց ղեկավարում էին ավելի հասուն ստրուկներ:

Բնականաբար բացի պալատական ծառայություններից

Սնվջուկյան սուլթաններն ունեին նշանակալի թվով ստրկական գորքեր՝ համաձայն այդ ժամանակաշրջանի իսլամական աշխարհի ավանդույթի³²:

Իբն Բիբիի մոտ ևս պարզորոշ նրևում է, որ Սնվջուկյանների մոտ դուլամները կարևոր դերակատարում ունեին: XIII դարի Անատոլիայում գործող դուլամական համակարգը ակնհայտորեն հաջողված էր մի քանի տնտեսկյունից: Այն պատրաստեց մեծաթիվ ունակ ու շնորհալի գեներալներ և ադամիստրատորներ, ինչպես նաև մահմեդական մշակույթի գործիչների, որոնցից ամեն մեկը իր ուրույն ներդրումն ունեցավ սնվջուկյան հասարակությունում: Համակարգի վրա էր դրված այս նրիտասարդ ստրուկներին լավ պատրաստվածությամբ ապահովելու պատասխանատվությունը:

Ժամանակի ընթացքում դուլամները և նրանց սնրունդները ձուլվեցին Անատոլիայի մահմեդական հասարակության մեջ:

XIII դարի վերջին ու XIV դարի սկզբին՝ Սնվջուկյան պետության անկման ժամանակաշրջանում, դուլամների օգտագործումն այդքան էլ լավ փաստագրված չէ: Մակայն անկասկած դրա պատճառը բավարար աղբյուրային նյութերի պակասն է, ոչ թե այդ նրևության իրական անհետացումը: Իրարից անկախ աղբյուրները, որոնք վերաբերվում են XIV դարի Փոքր Ասիային, վկայում են, որ քրիստոնյա ստրուկները նույնքան բազմաքանակ էին, որքան նախկինում, և որ թյուրք էմիրները շահագործում էին դուլամներին իրենց կառավարչական ու ռազմական վարչակարգում:

XIV դարի առաջին կեսին, նրբ Մատթեոս Եփեսացին առաջին անգամ գրավում է Եփեսոսի մետրոպոլիտի աթոռը, նա սարսափում է շրջանում հույն ստրուկների բազմությամբ: Մահմեդական հեղինակները ևս նշում են, որ արևմտյան Փոքր Ասիայի թուրքմենական ցեղերը շարունակաբար արշավում էին հունական հողեր ու բազմաթիվ գերիներ բերում, ընդ որում նրանք հատկապես առանձնացնում էին հույն նրելաաններին³³:

Սվազն այդ ժամանակաշրջանում հանդիսանում էր ստրուկների կարևոր շուկա, որտեղ միշտ կարելի էր նրիտասարդ ստրուկներ գնել³⁴: Այսպես, Իբն Բատուտան Փոքր Ասիայի արևմտյան մասում իր ճանապարհորդության ժամա-

նակ հավաքել էր որոշ քանակությամբ նրիտասարդ ստրուկներ, որոնցից ոմանց նա գնել էր, ոմանց՝ ստացել որպես նվեր³⁵։

Ի նկատի ունենալով, որ քրիստոնյա ստրուկները այդքան մեծ թիվ էին կազմում XIV ու XV դարերում, պետք է ակնառվալի, որ իշխանությունների վարչական ու ռազմական համակարգում իր շարունակությունն ուներ դուլամներ պահելու սկզբունքը։

Այսպիսով, երբ օսմանցիները գրավեցին XV դարում Անատոլիայի մեծ մասը, անատոլիական տարածքների քրիստոնյա նրիտասարդների օգտագործումը պետական ծառայության մեջ արդեն ուներ գրեթե երկրորդապատմություն։ Օսմանցիները չէին, որ պետք է ծանոթացնեին Փոքր Ասիայի քրիստոնյա բնակչությանը ստրկության հետ, սակայն նրանք էին, որ անտեսելով բոլոր գրված ու չգրված օրենքները՝ իրենց համար ստրուկ էին հավաքում ոչ թե ռազմագերիներից և կամ ասպատակությունների ժամանակ, այլ իրենց սեփական հպատակներից՝ դարձնելով այդ պրակտիկական պարբերական ու մոցնելով այն հարկային համակարգ։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. *H. Макиавелли*, Государь: Сочинения. — М., 1999г., с. 656.
2. *H. Макиавелли*, с. 656.
3. Sliu' The Turkish letters of Ogier Ghiselin de Busbeq, imperial ambassador at Constantinople, 1554-1562, translated from Latin of the Elzevir edition of 1633 by Forster, Edward Seymour, Oxford, 1968.
4. *M. I. Kunt*, The sultan's servants, the transformation of Ottoman provincial government, 1550-1650, New York, 1983, p.32.
- Մամուր՝ ստրուկ, որն արաբական Արևելքում օգտագործվում էր պալատական ծառայությունների համար ու բանակում։
5. *D. Ayalon*, Preliminary remarks on the Mamlūk Military Institution in Islam, War, Technology and Society in the Middle East, Ed. Parry V.J. and Yapp M.E., London, 1975, pp. 44-45.
6. *D. Ayalon*, pp. 46.
7. *M. I. Kunt*, The sultan's servants, p.32.
8. *C. Cahen*, Pre-Ottoman Turkey, London, 1968, p. 7.
9. *D. Ayalon*, pp. 56.

10. *İ. H. Uzunçarşılı*, Osmanlı devleti teşkilatına medhal, İstanbul, 1941 (այսուհետ՝ Medhal), s. 115:

* Դնվշիրմն՝ տղայահավաք, «արյան հարկ», հարկատնսակ, համաձայն որի Օսմանյան կայսրությունում պարթրականորեն հավաքագրում էր իր քրիստոնյա հպատակների որդիներին՝ օգտագործելով հետագայում ըստ իր կարիքների:

11. *C. Cahen*, Pre-Ottoman Turkey, p. 231.

12. *V. Speros, Jr.*, The Decline of Medieval Hellenism in Asia Minor and the Process of Islamization from the Eleventh through the Fifteenth Century, Berkley, Los Angeles, London, 1986, p.240.

Ղուլամ՝ ստրուկ, որը մասնավորապես Սելջուկյանների մոտ օգտագործվում էր պալատական ծառայությունների համար ու բանակում:

13. *V. Speros, Jr.*, Seljuk Gulams and Ottoman Devshirmes, Der Islam, Band 41, 1964, p.225

14. *V. Speros, Jr.*, Seljuk Gulams and..., p.226

15. *H. W. Duda*, Die Seltschukengeschichte des Ibn Bibi, Kopenhagen, 1959, pp.114, 121, 320 (այսուհետ՝ Duda).

16. Իբն Բատտուտան նշել է 13-14-րդ դարերի Անատոլիայում բազմաթիվ քրիստոնյաների մասին (տե՛ս՝ *Ibn Batoutah*, Voyages, trad. par G. Defrémery et B. R. Sanguinetti, Paris, T. I-IV, 1893-1922):

17. *V. Speros, Jr.*, Seljuk Gulams and..., p.226

* Իքթայի համակարգ՝ ռազմաավատական համկարգ, նրբ իքթա-հողակտորի դիմաց ավատատերը պարտավոր էր պատերազմի դեպքում ներկայացնել համապատասխան թվով զինված մարդիկ:

18. Մահմեդական Մերձավոր Արևելքում ղուլամների ավանդույթը ռազմական ու վարչական համակարգում նկարագրված է հետևյալ գրքում. *Uzunçarşılı İ.H.*, Osmanlı devleti teşkilatına medhal, İstanbul, 1941: Սելջուկյան ժամանակաշրջանում ղուլամների գոյության ու գործունեության հիմնական աղբյուրն է Իբն Բիբիի «Սելջուկնամեն», որը գրի առնվել 13-րդ դարում՝ *Ibn Bibi* (el-Huseyin b. Muhammed b. Ali el-Caferi er-Rugadi), el-Evamirü'l Ala'ıye fi'l-Umuri'l-Ala'ıye (Selçukname), hazırlayan M. Öztürk, 2 cilt, Ankara, 1996:

19. *Duda*, p.60.

20. *Duda*, p.63.

21. *Ibn Bibi*, c.2, s.85-86; *Duda*, p.238.

22. *Ibn Bibi*, c.1, s. 421-423; *Duda*, p.176-178.

23. *Ibn Bibi*, c.1, s.324; *Duda*, p.139.

24. *Ibn Bibi*, c.1, s.166; համաձայն այդ օրենքի սուլթանին էր պատկանում ավարի մեկ հինգերորդ մասը:

25. *İ. H. Uzunçarşılı*, Medhal, p. 115-116.
26. *Duda*, p.238.
27. *Duda*, pp.52, 54, 59, 128, 197, 210, 254, 330, 341 lûf ; *Ibn Bibi*, c.1, s. 158-159:
28. *Ibn Bibi*, c.1, s. 425-428.
29. *Duda*, pp. 117-122, 330.
30. *Duda*, p. 242
31. *Duda*, p. 330
32. *V. Speros, Jr.*, Seljuk Gulams and..., p.231
33. *V. Speros, Jr.*, Seljuk Gulams and..., p.240.
34. *İ. H. Uzunçarşılı*, Medhal, p. 442.
35. *Ibn Batoutah*, T. II, 1914, pp. 307, 309, 310-311, 317.

ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ
ԶԱԼԱԼ ԱԴ-ԴԻՆԻ
ԱՐՇԱԿԱՆՔՆԵՐԻ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ

1220-1222 թթ. դեպի Անդրկովկաս կատարած հետախուզական արշավանքի ընթացքում մոնղոլական 20 հազարանոց բանակը Ջեքե Նոյինի և Մուբադայ Բահատտուրի գլխավորությամբ նրկրամատում բազմաթիվ ավերածություններ գործելուց և նրեք ճակատամարտերում հայ-վրացական զորքերին հաղթելուց հետո հեռացավ Հյուսիսային Կովկաս¹: Մոնղոլների հաջողությունները պայմանավորված էին ոչ միայն տարածաշրջանում հզորագույններից մեկը համարվող վրացական թագավորությունում ավատատիրական ներհակություններով, այլև նրանով, որ վրաց թագավոր Գեորգի Լաշան (1207-1222), Գանձակի Էլտկուզյան աթաբեկ Ուզբեկը (1210-1225) և Ծիրվանի տիրակալ Գուշտաբս I-ը (1203-1225) չկարողացան իրենց հակասությունները մի կողմ դնելով մոնղոլների դեմ միասնական ճակատ կազմել:

Երբ մոնղոլները մտան Հյուսիսային Կովկաս, նրանց ճնշման տակ թյուրքական ցեղերից մեկի՝ ղփչաղների մի ստվար հատված, որի կովող ուժը Ջ. Բունիյաթովն առանց աղբյուրը նշելու 50 հազար է հաշվում², 1222 թ. ներխուժեց Ծիրվան: Մոտենալով Դերբենտին, նրանք վերջինիս տիրակալ Էմիր Ռաշիդից՝ Գուշտաբս I-ի նղբորից, հավատարիմ ծառայության դիմաց բնակության տեղ խնդրեցին: Սակայն զգուշավոր Ռաշիդը ոչ միայն մերժեց, այլև նրանց իր տիրույթներից փտարելու անհաջող փորձ կատարեց: Դրան հետևեց ղփչաղների կողմից Դերբենտի նենգորեն զրավումն ու կողոպուտը³: Ղփչաղներն այնուհետև, Դերբենտից հեռանալով, պաշարեցին Կապադակ (Կաբալա) քաղաքը, որն իր գավառով մտնում էր վրացական թագավորության կազմի մեջ: Իբն ալ-Ասիրի անուղղակի, իսկ Կիրակոս Գանձակեցու ուղղակի վկայություններից հետևում է, որ նրանք Կապադակի տիրոջ միջոցով Գեորգի Լաշայից և վրացական թագավորության աթաբեկ Իվանն Զաքարյանից բնակության տեղ խնդրեցին՝ խոտանալով հավատարիմ ծառայություն: Մի քանի օր անց մեր-

A 90470

ծում ստանալով՝ ղփչաղները կողոպտում են Լապաղակ գավառն ու շարժվում դեպի Գանձակ⁴: Դներենտում ղփչաղների դրսևորած նենգությանը քաջատնդյակ էմիր Քուշխարան՝ Գանձակում Ուզբեկի տնդապահը, գորքով նրանց ընդառաջ է դուրս գալիս: Ղփչաղները, մարտից խուսափելով և վստահության պատանդներ ուղարկելով, Քուշխարային հավատացնում են, որ իրենք նկնել են Ուզբեկին ծառայելու, իսկ Դներենտը գրավել են, քանզի Շիրվանի տներն իրենց արգելել էր դա անել: Ղփչաղների փաստարկին հավատալով՝ Քուշխարան նրանց թույլ է տալիս տնդավորվել Գանձակի շրջակայքում և այդ մասին իրագնկ պահում աթաբեկ Ուզբեկին: Վերջինս հրամայում է ղփչաղներին բնակեցնել Քիլքուն լեռան մոտ⁵: Ինչպես նշում է Կիրակոս Գանձակեցին, Գանձակի բնակիչները ղփչաղներին «յոժարութեամբ ընկալան, քանզի էին ի մեծ ննդութեան ի գորացն վրաց, որք անրեէին գաշխարհս նոցա և գնրեէին գմարդ և զանասուն: Ետուն նոցա տնդի բնակութեան ի սահմանս քաղաքին, օգնեին և այլ կնրակրօք և ըմպնօք, զի նոքօք կայցնն ընդդէմ թագաւորութեանն Վրաց»⁶: Այսպիսով, իր տիրութենքում ղփչաղներին բնակեցնելով Ուզբեկը նպատակ ուներ նրանց օգնությամբ հետ մղել Գանձակի աթաբեկության վրա հայ-վրացական գորքերի շարունակական հարձակումները: Դրանք ընդհատվել էին 1217 թ., նրբ Ուզբեկը ճարահատյալ ընդունել էր խորնզմշահ Մուհամմադի (1200-1220) գերիշխանությունը⁷: Այժմ արդեն, նրբ մոնղոլների կողմից 1218-1220 թթ. խորնզմշահների պնտության ջախջախումից ու փաստական վնրացումից և Մուհամմադի անփառունակ վախճանից հետո Ուզբեկը գրկվել էր հզոր հովանավորությունից, հայ-վրացական սպասելի ոտնձգություններին փորձում էր դիմագրավել ղփչաղների օգնությամբ:

Լապաղակի պաշարումն ու գավառի կողոպտուղ և Գանձակի Էլտկուդյան աթաբեկությունում ղփչաղների հաստատվելը վրաց արքունիքին ստիպում է համապատասխան քայլի դիմել: Ի վանն աթաբեկը, գորք հավաքելով, փորձում է ղփչաղներին հանկարծակիի բնրելով կոտորել, իսկ Գանձակը՝ գրավել ու տվնրել: Սակայն իրադարձություններն այլ ընթացք են ստանում, քանի որ Քուշխարային հայ-վրացական կողմի մտադրությունը հայտնի է դառնում և նա ղփչաղներին հրամայում է վնրադառնալ ու բանակել Գանձակի մոտ: Քուշխարայի կարգադրությունը

կատարելուց հետո ղփչաղների մի գորախումբ շարժվում է հայ-վրացական գորքերին ընդառաջ և պարտության մատնում⁸։ Իբն ալ-Սաիրը ղփչաղների հաղթանակը բացատրում է հակառակորդին հանկարծակիի բերելով, իսկ Լիբակոս Գանձակնցին ու Վարդան վարդապետը՝ հայ-վրացական գորքի հոգնածությամբ, ինչպես նաև Իվանն աթաբեկի ինքնավստահությամբ ու անզգուշությամբ, որը բխում էր նրա բանակի մեծաքանակությունից⁹։ Ակններև է, որ Իվանն աթաբեկի գորքի նրթուղուն իրագնկ ղփչաղները, նախօրոք հարմար տեղ ընտրելով, ռազմերթից հոգնած հակառակորդին մարտ էին պարտադրել ու հաղթել։ Այս ճակատամարտի նկարագրության ժամանակ Լիբակոս Գանձակնցու օգտագործած «լքնալ գօրն վրաց»¹⁰ արտահայտությունը ննթադրել է տալիս, որ այս անգամ ևս Իվանն աթաբեկն իբրև գորահրամանատար պատշաճ բարձրության վրա չի գտնվել։ Հայ-վրացական գորքը, մեծ կորուստներ տալով, փախուստի է դիմում, իսկ շատ հայտնի իշխաններ ու ազատներ գերվում են։ Գերվածների մեջ էր նշանավոր իշխան Նաղբակի որդի Պապաբը, իսկ գոհվածների մեջ՝ թողը՝ Վասակի որդի Գրիգորը՝ «արք քաջք և անուանիք, որ յաիէ նոցա դողայր ամենայն գօրն տաճկաց»¹¹։ Գրիգորին Գանձակում բանտարկելով՝ կտտանքների միջոցով փորձում են մահմեդական դարձնել, սակայն նա հրաժարվում է և տանջամահ արվում¹²։ Մյուս գերյալներին ղփչաղները սննդի կամ հագուստի դիմաց Գանձակում վաճառում են. «և պարսիցն գննալ նոսա,- գրում է Լիբակոս Գանձակնցին,- անհնարին ննդութնամբ կնդէին գկնասն նոցա. և այնքան պահանջէին ի նոցանէ կշիռս ոսկոյ և արծաթոյ, մինչև անհնարին լիննր հատուցանել. և բազումք մնեան ի բանտի անդ»¹³։ Լիբակոս Գանձակնցու վկայությամբ Գանձակի քրիստոնյաները, այսինքն՝ հայերը, անում էին հնարավորը՝ նրանց փրկագնելու կամ գոնև վիճակները թնթեացնելու համար¹⁴։

Երբ ղփչաղները վերադառնում են Քիլիքու լեռան մերձակայքում գտնվող իրենց բնակատեղին, ճակատամարտին չմասնակցած ղփչաղական մի այլ գորամաս որոշում է կրկնել նրանց հաջողությունը։ Քուշսարան նրանց հորդորում է չշտապել, մինչև ինքը չպարզի հակառակորդի դրությունը։ Սակայն, լստ նրկույթին, ղփչաղները, նախորդ հնչտ հաղթանակով ոգևորված, նրան չեն լսում և վրացական թագավորություն ներխուժելով Իվանն ա-

թաթենկին պատկանող Վարդանաշատ գավառում կողոպուտ ու ավերածություններ կատարելով և գերիներ վերցնելով հետ են դառնում¹⁵։ Այս անգամ արդեն, նախորդ անհաջողությունից համապատասխան հետևություններ արած Իվանն աթաթենկը, նրանց հանկարծակիի բերելով, Վարդանաշատի շրջանում գլխովին ջախջախում է, շատերին գերում, իսկ ավարն ու գերիներին հետ խլում¹⁶։

Եթե Կիրակոս Գանձակեցին պնդում է, որ այս ճակատամարտում Իվանն աթաթենկը կոտորել է ղեչաղների ամբողջ զորքը, ապա Վարդան վարդապետը հայտնում է, որ կոտորվել է «գառնի մասն Խաչաղին»¹⁷, ինչը համահունչ է Իբն ալ-Ասիրի վկայությանը և համապատասխանում է իրականությանը։ Ինչ վերաբերում է այս ճակատամարտի թվագրությանը, ապա իրապատում է Կիրակոս Գանձակեցին և ոչ թե Վարդան վարդապետը։ Նրանցից առաջինն այս ճակատամարտը թվագրում է նախորդից «յնտ ատուրց ինչ անցանելոյ», իսկ նրկորդը՝ «ի գալ ամին», այսինքն՝ 1223 թ.¹⁸։ Կիրակոս Գանձակեցու իրավացիությունը նրևում է Իբն ալ-Ասիրի այն հաղորդումից, ըստ որի հայ-վրացական զորքերն այս իրադարձությունից հետո՝ 1222 թ. աշնանը (9 հոկտեմբեր – 8 նոյեմբեր) գրավել են Բայլականը¹⁹։ Հետևաբար, Հ. Մանանդյանը և նրա հետևողյալը Լ. Բաբայանը սխալվել են, երբ Վարդան վարդապետի վկայությունը հիմք ընդունելով, այս ճակատամարտը թվագրել են 1223-ով²⁰։

Այս ճակատամարտից հետո ղեչաղների մնացորդները շարժվում են Պարտավ և Զուշսարային խնդրում զորքով միանալ իրենց՝ պարտության վրեժը լուծելու համար։ Սակայն Զուշսարան, ղեչաղների ինքնագլխությունից դժգոհելով և հայ-վրացական բանակի հետ բախումից զգուշանալով, հրաժարվում է դա անել, ինչը հանգեցնում է նրանց հարաբերությունների սրմանը։ Ղեչաղները հետ են պահանջում իրենց տված վստահության պատանդներին և, մերժում ստանալով, փոխարենը գերում Ուզբեկի բազմաթիվ հալատանկների, ինչպես նաև դիմում զանազան խժոժությունների։ Սա, բնականաբար, հարուցում է տևիկ բնակչության սուր դժգոհությունը, որն ըմբոստանում է ղեչաղների դեմ։ Դրա հետևանքով բազմաթիվ ղեչաղներ սպանվում են։ Խիստ թշնամական միջավայրը ղեչաղներին հարկադրում է հեռանալ Շիրվան, իսկ այնտեղից՝ լաքզերի նրկիրը։ Ճանապարհին

նրանք ննջարկվում են տնդի մահմնդական բնակիչների, հայ-վրացական զորքերի և լաքզերի հարձակումներին՝ տալով մեծ կորուստներ²¹։

Այս իրադարձություններից որոշ ժամանակ անց՝ 1222 թ. աշ-նանը (9 հոկտեմբեր – 8 նոյեմբեր) հայ-վրացական զորքերը, վերսկսելով Գանձակի Էլսկուզյան աթաբեկության վրա 1217 թ. ընդհատված արշավանքները, ինչպես նշվեց, պաշարում են Բայ-լականը։ Այդ քաղաքը նոր էր սկսել ապաքինել մոնղոլների պատճառած վերքերը և կենդանի մնացած բնակիչները հնարա-վորինս ամրացրել էին Բայլականի՝ մոնղոլների կողմից ավեր-ված պարիսպները։ Ուզբեկը, որը գտնվում էր Թավրիզում ու տրվել էր անառակությանն ու հարբեցողությանը, բայլականցի-ներին չի օգնում, և հայ-վրացական զորքերին հաջողվում է Բայ-լականը գրավելով կողոպտել ու ավերել, իսկ բնակչությանը՝ սրի քաշել²²։ Այս իրադարձության մասին պատմելիս Իբն ալ-Ասիրը հայ-վրացական զորքերին անվանում է «լավագույն թշնամի-ներ», դա պատճառաբանելով նրանով, որ նախքան այդ, նրանք, իբրև կանոն, որևէ քաղաք գրավելուց հետո այն չէին ավերում բավարարվելով քաղաքացիների տված որոշակի գումարով։ Պատմիչի վկայությամբ, բայլականցիները, կարծելով, թե այս անգամ ևս հայ-վրացական զորքերից կարող են համապատաս-խան գումարով փրկագնվել, նրանց անհրաժեշտ դիմադրություն չէին ցույց տվել կամ էլ փախել²³։ Տվյալ դեպքում բայլականցինե-րի նկատմամբ հայ-վրացական զորքերի դրսևորած դաժանույթ-յունը թերևս բացատրվում է նրանց մեծ տեսություններ պատ-ճառած դժգոհների հարցում Ուզբեկի վերաբերմունքով։ Դեպի Բայլական հայ-վրացական զորքերի արշավանքի մասին հայ-վրացական աղբյուրները լռում են։

1223 թ. սեպտեմբերին, երբ Սուրմարիի (Սուրբ Մարի) տները գտնվում էր իսլաթում, նրա տեղապահ Էմիրը, որի անունն Իբն ալ-Ասիրը չի հիշատակում, զորք հավաքելով ներխուժում է Զա-քարյան Հայաստան և ավարառուական գործողություններ իրա-կանացնում շրջակա տարածքներում կողոպտելով բազմաթիվ գյուղեր²⁴։ Ըստ Իբն ալ-Ասիրի, ի պատասխան, «Դուիհի (Դվին - Ա. Ե.) տները, որի անունն էր Շալուա և վրաց (քուրջ) մեծամեծ իշ-խաններից էր, զորք հավաքեց, շարժվեց Սուրմարի, այն օրերով պաշարեց, կողոպտեց քաղաքը, նրա շրջակայքը և վերադար-

ձափ»²⁵: Դեպքերի հետագա ընթացքին անդրադառնալիս պատմիչը ևս նրկու անգամ Շալուային հիշատակում է իբրև Դվինի տեր (ամիրա) և սուրմարեցիների դեմ արշաված հայ-վրացական զորքի հրամանատար: Սակայն, իրականում, Դվինը պատկանում էր Իվանն աթաբեկին և նրա նրկու նստավայրերից մեկն էր (մյուսը Բջնին էր): Պնդն, որ Իբն ալ-Ասիրն Իվանն աթաբեկին ու Շալուային նույնացրել է, ճիշտ չի լինի, քանի որ նրանց քաջ գիտի և հստակ տարբերում է՝ մասնավորապես Իվաննին քանիցս տարբեր առիթներով հիշատակելով²⁶: Հետևաբար, իրոք, սուրմարեցիների վրա հարձակված հայ-վրացական զորքի հրամանատարը նրկն է Շալուան: Քանի որ սուրմարեցիներն արշավել էին Դվինի շրջակա գյուղերի վրա, իսկ նրանց դեմ ի պատասխան հարձակված զորքը նկն էր Դվինից, պատմիչը կարծել է, թե Շալուան նրկն է Դվինի տերը: Շալուայի ով լինելը պարզվում է Իբն ալ-Ասիրի հետագա շարադրանքից: Բանն այն է, որ Իբն ալ-Ասիրը, իբրև կանոն, այս կամ այն հայտնի անձնավորության մասին խոսելիս նրան հնարավորինս սպառիչ է ներկայացնում՝ հետագայում բավարարվելով անվան սուկական հիշատակմամբ: Նա իր սկզբունքից չի շեղվել նաև Շալուայի հարցում և նրան վերջին անգամ հիշատակելիս բավարարվել է միայն անունը նշելով: Եվ քանի որ նա վերջին՝ չորրորդ (հանվան՝ նրորորդ) անգամ Շալուային հիշատակում է Գառնիի 1225 թ. ճակատամարտում գերվելու առթիվ. «շատերը գերի ընկան, որոնց մեջ էր Շալուան»²⁷, ապա պարզվում է, որ նա վրաց հայտնի իշխան Շավա Ախալցխիսելին է՝ նույն մարտում զոհված Իվանն Ախալցխիսելու նոքայրը²⁸:

Երբ Շավա Ախալցխիսելու գլխավորած հայ-վրացական զորքը հետ էր դառնում, նրա վերջապահին հասնում է Սուրմարիի տիրոջ բանակը և ավարը հետ խլում²⁹: Քիչ անց հայ-վրացական զորքերը Շավա Ախալցխիսելու հրամանատարությամբ կրկին շարժվում են դեպի Սուրմարի, սակայն, Դվինից Սուրմարի տանող ճանապարհին այդ արշավանքի մասին տեղեկացված սուրմարեցիների կողմից շրջապատվելով պարտվում են՝ տալով մեծաքանակ զոհեր ու գերյալներ: Վերջիններիս թվում էին Շավա Ախալցխիսելին ու մի խումբ մեծատոհմիկներ³⁰: Իրադարձությունների նման ընթացքը վրաց արքունիքին ստիպում է բացառություն պահանջել Էյուբյան տիրակալ ալ-Աշրաֆից, որի նդ-

բայր ու ննթակա Շիհաբ ալ-Դին Ղազիի վասալն էր Սուրմարիի տները: Ալ-Աշրաֆին վրաց արքունիքի հղած նամակում ասվում էր. «Եթե հաշտության մեջ ենք, ցանկանում ենք, որ գերությունից արձակվեք մեր մարդկանց: Իսկ եթե խաղաղությունը մեր մեջ արդեն խախտված է, ապա հայտնեցեք մեզ, որպեսզի մենք միջոցներ ձեռք բերենք»³¹: Այս նամակին ի պատասխան ալ-Աշրաֆը Սուրմարիի տիրոջը հրամայում է ազատ արձակել գերիներին և վերանորոգել հաշտությունը, ինչը և արվում է³²: Էյուբյան տիրակալի այս քայլը բացատրվում է Իկոնիայի՝ վերստին հզորացող սուլթանության վտանգավոր հարևանության և տարածաշրջանի անկայուն իրադրության պայմաններում ի դեմս վրացական թագավորության ոչ պակաս ուժեղ թշնամի չստեղծելու մտահոգությամբ: Այս իրադարձությունների մասին ևս հայ-վրացական աղբյուրները լռում են: Օգտվելով Էյուբյանների թուլացումից, մոնղոլական նվաճման նախօրյակին՝ 1235 թ., Զաքարյանները (Շահնշահ ամիրսպասալար) իրագործելով իրենց վաղեմի նպատակը, տիրացան Սուրմարիին³³: Ինչպես ճիշտ նկատել է Հ. Մարգարյանը, հենվելով Ստեփանոս Օրբելյանի և վրաց անանուն ժամանակագրի տեղեկությունների վրա³⁴, նրանք հավանաբար այդ ժամանակ են գրավել նաև Կաղզվանն ու Վաղարշակներտը³⁵:

1225 թ. հայ-վրացական գորքերը վերսկսեցին Գանձակի Էլուկույան աթաբեկության դեմ հարձակումները և պաշարեցին Գանձակը: Սակայն պաշարումը ոչ միայն անհաջող անցավ, այլև պաշարյալները քաղաքից դուրս գալով մարտի մեջ մտան հայ-վրացական գորքերի հետ և նրանց պարտության մատնելով ստիպեցին ձեռնունայն հեռանալ³⁶: Այդ նույն թվականին իր որդու՝ Ֆարիքուրդի կողմից գահընկեց արված շիրվանշահ Գուշտաբս I-ը իր իշխանությունը վերականգնելու նպատակով դիմեց վրացական արքունիքին, հաջողության դեպքում խոստանալով իր տիրույթների կեսը: Շիրվանշահին վերստին գահ բարձրացնելու համար վրաց արքունիքն ուղարկում է երեք հազարանոց բանակ: Գուշտաբս I-ի որդին նրա դեմ է դուրս գալիս հազար հեծյալից բաղկացած զորամասով և ծանր պարտության մատնում: Հայ-վրացական բանակը տալիս է բազմաթիվ սպանվածներ ու գերյալներ և հեռանում Շիրվանից: Դրանից հետո վրաց արքունիքն այլևս չի միջամտում Շիրվանի ներքին գործերին³⁷:

Այս իրադարձությունից հետո, դարձյալ 1225 թ., հայ-վրացական մի գործամաս, Տփլիսից դուրս գալով, արշավում է դեպի Ատրպատական: Սակայն, ճանապարհին մի կիրճում այն, դարանակալ հարձակման ենթարկվելով, ջախջախվում է՝ տալով բազմաթիվ սպանվածներ ու գնդալներ³⁸: Այս խայտառակ պարտության վրեժն առնելու նպատակով վրաց արքունիքը ձեռնամուխ եղավ դեպի Ատրպատական նոր արշավանքի նախապատրաստմանը: Սակայն, այդ ընթացքում լուր ստանալով, որ խորեզմշահ Մուհամմեդի որդի Ջալալ ադ-Դինը մտել է Մարահա, վրաց արքունիքն այդ մտքից ոչ միայն հրաժարվեց, այլև աթաբեկ Ուզբենկին առաջարկեց համատեղ ուժերով հետ մղել Ջալալ ադ-Դինին: Վրաց արքունիքն իր առաջարկությունը հիմնավորում էր նրանով, որ համատեղ չգործելու դեպքում Ջալալ ադ-Դինը նախ Գանձակի Էլտկույան աթաբեկությունը կգրավի, ապա՝ վրացական թագավորությունը³⁹: Մինչ նրանք համաձայնության կգային, Ջալալ ադ-Դինը նրանց կանխեց և, իսկապես, հեշտությամբ գրավեց նախ Գանձակի Էլտկույան աթաբեկությունը, ապա նաև վրացական թագավորությունը:

Այսպիսով, մոնղոլների 1220-1222 թթ. հնտախուզական արշավանքներից մինչև 1225 թ. սկսված Ջալալ ադ-Դինի նվաճումների արանքում ընկած ժամանակաշրջանում Անդրկովկասում չէին դադարում նրկրամասի և շրջակա քաղաքական կազմավորումների զինական բախումները, որոնք ավելի էին թուլացնում նրանց առանց այդ էլ մոնղոլների արշավանքի հետևանքով նվազած ուժերը և պարարտ հող պատրաստում մի նոր, հզոր թշնամու՝ խորեզմցիների կողմից նրկրամասի դյուրին նվաճման համար: Անդրկովկասում հզորագույն քաղաքական կազմավորումը համարվող վրացական թագավորությունն այդ ընթացքում իրենից անհամեմատ թույլ հակառակորդների հետ բախվելիս, ինչպես տեսանք, շարունակ անհաջողություններ էր կրում, ինչը հղի էր լուրջ վտանգներով, ինչպես այդ պետության, այնպես էլ ավատական ենթակարգության սկզբունքով նրա կազմի մեջ մտնող Ջաբարյան Հայաստանի համար:

1. Մանրամասն տե՛ս Ա. Ծահնագարյան, Մոնղոլների հետախուզական արշավանքն Անդրկովկաս («Պատմա-բանասիրական հանդես», 2000, N 2, էջ 85-107):
2. 3. М. Буниятов, Государство атабеков Азербайджана (1136-1225 годы), Баку, 1978, с. 118.
3. Օտար աղբյուրները Հայաստանի և հայների մասին (այսուհետև՝ Իբն ալ-Ասիր), հ. 11, Երևան, 1981, էջ 308-309, Հաւարումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանմալ, Վենետիկ, 1862, էջ 142, Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, Երևան, 1961, էջ 204:
4. Իբն ալ-Ասիր, էջ 309-310, Կիրակոս Գանձակեցի, էջ 204:
5. Իբն ալ-Ասիր, էջ 310: Ա. Տեր-Ղևոնդյանը հակված է եղել Քիրունը, համահնչյունությունից նվնլով, նույնացնել Գնդարքունիքի հետ (Իբն ալ-Ասիր, էջ 404, ծան. 330): Դա անընդունելի է թեկուզ այն պատճառով, որ Գնդարքունիքը գտնվում էր վրացական թագավորության տարածքում՝ Իվանն աթաբեկի տիրույթների մեջ: Հայ-վրացական զորքերի և ղեկավարների միջև կայացած նրկրորդ ճակատամարտից հետո վերջիններիս մնացորդների Պարտավ դիմելը (Իբն ալ-Ասիր, էջ 311) ննթադրել է տալիս, որ Քիրունը պետք է փնտրել այդ տարածքում:
6. Կիրակոս Գանձակեցի, էջ 204:
7. Шухаб ад-Дин Мухаммад ан-Насаби, Жизнеописание султана Джалал ад-Дин Манкбурны, Баку, 1973, с. 61.
8. Իբն ալ-Ասիր, էջ 310:
9. Նույն տեղում, Կիրակոս Գանձակեցի, էջ 204-205, Վարդան վարդապետ, էջ 142-143: Մխիթար Այրիվանեցին, այս իրադարձությանն անդրադառնալով, բավարարվել է «ղեկավարն նհար զԼաշայն ի Գանձակ» («Մխիթարայ Այրիւաննցո Պատմութիւն Հայոց», Մոսկվա, 1860, էջ 81) արտահայտությամբ՝ հայ-վրացական զորքի հրամանատարությունը սխալմամբ վերագրելով Գնորգի Լաշային:
10. Կիրակոս Գանձակեցի, էջ 205:
11. Նույն տեղում: Հմմտ Վարդան վարդապետ, էջ 142-143, Մխիթար Այրիվանեցի, էջ 80:
12. Կիրակոս Գանձակեցի, էջ 205-206:
13. Նույն տեղում, էջ 205:
14. Նույն տեղում, էջ 206:
15. Իբն ալ-Ասիր, էջ 310-311:
16. Նույն տեղում, էջ 311, Կիրակոս Գանձակեցի, էջ 205, Վարդան վարդապետ, էջ 143:

17. *Կիրակոս Գանձակեցի*, էջ 206-207, *Վարդան վարդապետ*, էջ 143:
18. *Կիրակոս Գանձակեցի*, էջ 206, 207, *Վարդան վարդապետ*, էջ 143:
19. *Իբն ալ-Ասիր*, էջ 311:
20. Վ. Մանանդյան, Զննական տնտեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Գ, Երևան, 1952, էջ 186, Լ. Վ. Բաբայան, Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը XIII-XIV դարերում, Երևան, 1964, էջ 189:
21. *Իբն ալ-Ասիր*, էջ 311:
22. *Նույն տեղում*, էջ 311-312:
23. *Նույն տեղում*:
24. *Նույն տեղում*, էջ 312:
25. *Նույն տեղում*:
26. *Նույն տեղում*, էջ 314, 321, 325, 328:
27. *Նույն տեղում*, էջ 321:
28. «Վրաց ժամանակագրություն (1207-1318)», Երևան, 1971, էջ 61, *ан-Насубу*, с. 159.
29. *Իբն ալ-Ասիր*, էջ 312:
30. *Նույն տեղում*, էջ 313:
31. *Նույն տեղում*:
32. *Նույն տեղում*:
33. «Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ.», հ. I, Երևան, 1951, էջ 41, *Կիրակոս Գանձակեցի*, էջ 260:
34. «Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի արքեպիսկոպոսի Սիւնեաց», Թիֆլիս, 1910, էջ 391-392, «Վրաց ժամանակագրություն (1207-1318)», էջ 91:
35. Վ. Գ. Մարգարյան, Ջալալ ադ-Դինի Հայաստան և Վրաստան կատարած արշավանքների պատմության շուրջ («Պատմաբանասիրական հանդես»), 1981, N 4, էջ 137, ծան. 71):
36. *Իբն ալ-Ասիր*, էջ 317:
37. *Նույն տեղում*, էջ 318-319: Հմմտ. *Сара Ашурбейли, Государство Ширваншахов (VI-XVI вв.)*, Баку, 1983, с. 151-152.
38. *Նույն տեղում*, էջ 319:
39. *Նույն տեղում*:

ՆԱԽԱՑԵՂԱՍԴԱՆՈՒԹՅՈՒՆ (PROTO-GENOCIDE).
ՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ
(Օսմանյան կայսրության օրինակով)

Ժամանակակից համեմատական ցնդասպանագիտության կարևոր խնդիրներից է ցնդասպանության նրկայի ծագումնաբանության ընդունելի հայնցակարգի ստեղծումը: Անդրադարձը կոնկրետ պատմական իրականանուցանը ցույց է տալիս, որ որոշ դեպքերում, գոյություն է ունեցել ցնդասպանություն իրականացնելու պնտական ծրագիր, սակայն և այդ ծրագիրը չի իրականացվել կամ էլ իրականացվել է մասամբ: Այդ նրկայը մենք առաջարկում ենք բնութագրել որպես նախա-ցնդասպանություն (proto-genocide): Սույն հոդվածում առաջին անգամ ցնդասպանագիտական գրականության մեջ փորձ է արվում՝ հենվելով Օսմանյան կայսրությունում 1876 թվականին ստեղծված իրավիճակի մանրակրկիտ հետազոտման վրա տալ այդ նրկային հայնցակարգային ձևակերպում:

1. Գնդասպանություն, կոտորած ու նախա-ցնդասպանություն.
տնտության որոշ խնդիրներ

Ինչպես հայտնի է, «գնդցիդ» (ցնդասպանություն) տնրմինը ստեղծել ու գիտական շրջանառության մեջ է մտցրել ծագումով հրնա լնի իրավագետ Ռաֆաել Լեմկինը: 1944 թ. ԱՄՆ-ում լույս տեսավ նրա «Առանցքի իշխանությունը գավթված Եվրոպայում» գիրքը, որտեղ առաջին անգամ օգտագործվում էր այդ բառը¹: Մեկ տարի անց այն առաջին անգամ տեղ գտավ պաշտոնական փաստաթղթում՝ գլխավոր գնրմանական ռազմական հանցագործներին դատելու նպատակով ստեղծված Նյուրնբերգյան ռազմական ատյանի մեղադրական ակտում²: Հետաքրքիր է նշել, որ մեղադրական ակտի ռուսներն տարբերակում ցնդասպանություն (գնդցիդ) բառը փոխարինված էր «ժողովուրդների կանխատեսված ու սիստեմատիկ բնաջնջում» արտահայտությամբ, որը, ըստ էության, պարգապես նրա ռուսներն բացատրությունն էր³: Հետագայում

այն այլևս Նյուրնբերգյան գլխավոր դատավարության ոչ մի պաշտոնական փաստաթղթում չօգտագործվեց: Այս ամենը վկայում է այն մասին, թե ինչ դժվարությամբ էր շրջանառության մեջ մտնում այդ տերմինը:

1946 թ. «գննոցիդ» տերմինը սկսում է օգտագործվել ՄԱԿ-ի պաշտոնական փաստաթղթերում եւ հետգինտե թափանցում է նաեւ աշխարհի հիմնական լեզուների բառապաշարի մեջ: Այդ գործընթացը ընթանում էր բավական դանդաղ, օրինակ, անգլերենի հանրածանոթ «վեբսթեր» բացատրական բառարանի մեջ այն տեղ գտավ միայն 1961 թ.⁴: Որոշ լեզուներում, օրինակ, հայերենում կամ գերմաներենում, որպես հոմանիշներ օգտագործվում են նաեւ նրա բառացի թարգմանությունները:

Ր. Լեմկինը, իր իսկ վկայությամբ, «գննոցիդ» տերմինը ստեղծել է այն ժամանակ արդեն օգտագործվող «տիրանիցիդ» (բռնակալի սպանություն), «հոմիցիդ» (մարդասպանություն), «ինֆանտիցիդ» (մանուկների սպանություն) բառերի համանմանությամբ⁵: Կարելի է ենթադրել, որ նրան ծանոթ է եղել նաեւ 19-րդ դարի վերջի - 20-րդ դարի սկզբի գերմանացի ականավոր հոգևորական ու հասարակական գործիչ, գերմանական ծավալապաշտության գաղափարախոսներից Ֆրիդրիխ Նաումանի կողմից դեռեւս դարասկզբին՝ 1890-ականների կեսի հայկական կոտորածների կապակցությամբ առաջին անգամ օգտագործած «արմնոցիդ» (հայասպանություն) բառը⁶, որը հետագայում որոշակի տարածում գտավ գերմանալեզու հրատարակություններում:

Յնդասպանության նրկայի կոնցնպտուալ ձեւակերպումը նույնպես առաջին անգամ տրվել է Րաֆանլ Լեմկինի կողմից: Նա գրում է. “Յնդասպանության տակ մենք հասկանում ենք ազգի կամ էթնիկական խմբի ոչնչացում (destruction)”⁷: Հիմք վերցնելով ցնդասպանություն իրականացողի *մտադրվածության* (intent) հանգամանքը, նա բնութագրել է այն որպես որոշակի ազգային, կրոնական կամ ռասայական խմբի դեմ “հալածանքի կամ ոչնչացման նպատակով իրականացվող տարաբնույթ գործողությունների ընդհանրություն (composite)”⁸: Նրա ընկալմամբ, բացի ֆիզիկական բնաջնջման քաղաքականությունից ցնդասպանություն պիտի ճանա-

չնչ այն հալածանքները տվյալ խմբի հասարակական, հոգևոր կամ տնտեսական հաստատությունների, մշակույթի, լեզվի, ազգային զգացմունքների, կրոնի դեմ, որոնք վտանգում են նրա հետագա գոյությունը որպես առանձին խումբ:

1946 թ. սկսեց ցնդասպանության կոնցենտրացիայի գործնական-իրավագիտական ձևակերպման գործընթացը: ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի առաջին նիստում ընդունված 96 (I) Բանաձևի նախաբանում նշվում էր, որ “ցնդասպանությունը (*qéneghê*) նշանակում է մարդկային խմբերի գոյության իրավունքի մերժում, այնպես, ինչպես որ մարդասպանությունը (*hnêghê*) նշանակում է առանձին մարդկային էակի կյանքի իրավունքի մերժում”⁹: Բանաձևը հաստատում էր, որ ցնդասպանությունը ոճրագործություն է միջազգային իրավունքի տեսանկյունից և նրա կատարողները ու մեղսակիցները, անկախ այն հանգամանքից նրանք մասնավոր կամ պաշտոնավարող անձինք են թե՛ պետական գործիչներ, ենթակա են պատժի: Բանաձևի կարևորությունը միջազգային իրավունքի տեսանկյունից առաջին հերթին կայանում էր նրանում, որ ցնդասպանությունը տարբերազատվում էր պատերազմական կամ խաղաղության դեմ կատարվող հանցագործություններից ու դիտարկվում էր որպես առանձին հանցագործություն: Այսպիսով տեսական հնարավորություն և ստեղծվում ցնդասպանության հանցակազմ հաստատելու ոչ միայն պատերազմական պայմաններում, այլ նաև խաղաղ ժամանակներում և ոչ միայն օտար պետությունների ներկայացուցիչների դեմ, այլ նաև այն պետության պաշտոնական անձանց դեմ, որտեղ բնակվում է ցնդասպանության ենթարկված մարդկային խումբը: Նույն տարում Գլխավոր Ասամբլեան առաջարկեց ՄԱԿ-ի Տնտեսական ու Սոցիալական խորհրդին հետազոտություններ ձեռնարկել՝ ցնդասպանության վերաբերյալ հատուկ կոնվենցիայի նախնական տեքստ նախապատրաստելու նպատակով¹⁰: 1947 թ. ընդունված ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 180 (II) Բանաձևում վերնում էր նշված միտումները ստացան հստակ ձևակերպում. “ցնդասպանությունը միջազգային ոճրագործություն է, որը հանգեցնում է առանձին անհատների և պետությունների ազգային և միջազգային պատասխանատվության”¹¹: Այս ձևակերպումը կարևոր է նաև նրանով, որ

այստեղ առաջին անգամ ուղղակիորեն դրվում է գնդասպանության ռճրագործության համար պետության պատասխանատվության խնդիրը:

Յնդասպանության իրավագիտական հայեցակարգի ստեղծման գործընթացը ավարտվեց 1948թ. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված "Յնդասպանության հանցագործության կանխարգելման եւ դրա համար պատժի մասին" Լոնվնցիայի ընդունմամբ¹²: Այստեղ տեղ գտած գնդասպանության բնորոշումը հիմնականում կրկնում է Ր. Լեմկինի բնորոշումը մեկ կարևոր տարբերությամբ. գնդասպանություն եւ համարվում ոչ միայն որեւիցե "ազգային, էթնիկական, ռասայական կամ կրոնական խմբի" լրիվ ոչնչացմանը նպատակաուղղված գործողություններ, այլ նաեւ՝ մասնակի ոչնչացմանը: Այս կատեգորիայի ներգրավումը գնդասպանության բնորոշման մեջ արդարացված է հումանիստական տեսակետից, սակայն եւ հանգեցնում է որոշ գործնական բնութի դժվարությունների, քանի որ հարց է առաջանում, թե՛ խմբի որ մասի ոչնչացումն է համարվում գնդասպանություն: Այդ դժվարությունը կարելի է հաղթահարել, ինչպես նշվում էր Լոնվնցիայի առաջին մեկնաբանություններից մեկում, անդրադառնալով դիտավորության հանգամանքին¹³:

Յնդասպանության կարևորագույն բնորոշիչներից մեկը՝ դիտավորությունը ոչնչացնելու որեւիցե ռասայական, ազգային կամ կրոնական խումբը, ինչպես արդեն նշել էինք նույնպես առաջինը մտքով գիտական և իրավագիտական շրջանառության մեջ Րաֆաել Լեմկինը: Այդպիսով նրան հաջողվել էր բացահայտել գնդասպանության կարևորագույն բնորոշիչներից մեկը՝ *մտադրվածությունը* ոչնչացնելու ողջ ռասայական, ազգային կամ կրոնական խումբը: Դրանով հնարավորություն էր ստեղծվում տարբերագատելու *կոտորածը*, որի դեպքում նման մտադրվածություն չկա, գնդասպանությունից, ինչից հետևում է, որ այդ նրկու նրկությունի միջեւ, հասարակագիտական կամ իրավագիտական տեսանկյունից (բայց, իհարկե, ոչ բարոյա - էթիկական) դատելով, գոյություն ունի որակական տարբերություն, այլ ոչ միայն՝ զուտ քանակական¹⁴:

Իրավագիտական գործառնություններում դիտավորության հանգամանքը ունի որոշիչ նշանակության: ՄԱԿ-ի նախքին

Գլխավոր քարտուղարներից Բուրոս Բուրոս-Ղալին բնութագրում է այն նույնիսկ որպես ցնդասպանության մասին ՄԱԿ-ի Կոնվենցիայի “հիմնարար տարր”¹⁵։ Եթե չի հաջողվում այն բացահայտել և ապացուցել, ապա հնարավորություն է ստեղծվում ընդհանրապես խուսափել ցնդասպանության համար պատասխանատվությունից, ինչպես կոնկրետ օրինակների վերլուծության հիման վրա եզրակացնում է ցնդասպանագիտական հետազոտությունների առաջնեկ Լևո Քուփենրը¹⁶։ Այսպես, օրինակ, բրազիլական կառավարությունը ժամանակին խուսափեց տեղաբնիկ առանձին ցեղերի դեմ ցնդասպանության մեջ մեղադրվելուց քանի որ նրան հաջողվեց ցույց տալ, որ բնակչության այդ խմբերի անհայտացումը արդյունք էր սովի, որը չէր ծրագրվել կառավարության կողմից¹⁷։

Այս տեսակետի կողմնակից որոշ իրավագետներ խստագույնս քննադատում են ՄԱԿ-ի Բանաձևը, գտնելով որ դիտավորության հանգամանքի ամկայությունը զգալիորեն սահմանափակում է նրա իրական կիրառելիության շրջանակները, քանի որ չափազանց դժվար է հաստատել և վավերագրել այսպիսի դիտավորության գոյությունը, մանավանդ այն դեպքերում, երբ ցնդասպանության հեղինակը պնդությունն է։ ՄԱԿ-ի փաստաթղթերից մեկում նույնիսկ նշվում էր, որ արդեն ձևավորվել են նրկու իրավագիտական դարոց այս խնդրում. առաջինը գտնում է, որ դիտավորության բացահայտումն ու ապացուցումը բացարձակ անհրաժեշտություն է, իսկ եկրորդի կողմնակիցները ընդգծում են, որ դիտավորության հանգամանքը ցնդասպանության դեպքում հատուկ ապացուցելու անհրաժեշտություն չկա, քանի որ այն օբյեկտիվորեն բխում է բուն ցնդասպանական գործողություններից¹⁸։ Վերջին տարիներին միջազգային իրավագետների շրջանում տարածում է ստացել տեսակետը, թե դիտավորության հանգամանքի բովանդակային նշանակության բացահայտումը և ամրագրումը այն իրավագիտական խնդիրներից է, որոնք կարոտ են հետագա ավելի խորացված հետազոտությունների¹⁹։

Իրավագետների շրջանում գոյություն ունեցող մոտեցումների տարբերությունները և բանավեճերը չնայած և տեղ գտան ՄԱԿ-ի այնպիսի մասնագիտացված ատյանների քննարկումներում, ինչպիսիք են Մարդու իրավունքների և Միջազգային

իրավունքի հանձնաժողովները, սակայն այդպես էլ չստացան իրավագիտական ձևակերպում: ՄԱԿ-ի 1948թ. Կոնվենցիան մնում է անփոփոխ: Այս փաստը մեկ անգամ ևս հաստատվեց ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից 1994թ. նոյեմբերին ընդունված բանաձևով, որը պարունակում էր որոշում ստեղծել Ռուսաստանում և հարևան երկրներում ցեղասպանության և միջազգային մարդասիրական օրենքների այլ բնույթի լուրջ խախտումների համար պատասխանատու անհատների պատիժը իրականացնող միջազգային դատարան: Այս փաստաթուղթը նույնությամբ կրկնում է 1948թ. Կոնվենցիայում տեղ գտած ցեղասպանության բնորոշումը²⁰:

Ինչպես ցույց է տալիս անդրադարձը իրավագիտական իրականությանը, ազգային իրավագիտական դպրոցները նախընտրությունը նույնպես տալիս են առաջին մոտեցմանը, միաժամանակ փորձելով դիտավորության հանգամանքին տալ ավելի ճշգրտված բնորոշում: Այսպես, օրինակ, երկարատև բանավեճերից հետո 1988թ. ԱՄՆ-ի Կոնգրեսը, որոշում ընդունելով երկրում կիրառության մեջ մտցնել 1948թ. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված "Ցեղասպանության հանցագործության կանխարգելման մասին" և դրա համար պատժի մասին" Կոնվենցիան, այդ փաստաթղթում օգտագործվող ցեղասպանության բնորոշման մեջ տեղ գտած "դիտավորությամբ" տերմինը փոխարինեց "որոշակի դիտավորությամբ" բառակապակցությամբ²¹:

Ֆրանսիական քրեական նոր օրենսդրությունը գնում է ավելի հեռու և սկզբունքային բնույթի նորամուծություն է կատարում: Այստեղ "դիտավորություն" տերմինը փոխարինված է "համակարգված ծրագրի իրագործում" արտահայտությամբ²²: Իրավագիտական առումով այդ արտահայտությունը կոնկրետացնում է դիտավորության հանգամանքը: Սակայն եթե վերլուծենք այդ փաստաթուղթը պատմական քաղաքականության տեսանկյունից, ապա կարելի է նգրականել որ այսպիսով, ըստ էության, հստակեցվում է դիտավորության հանգամանքի բյուրեղացման գործընթացի պարագան, քանի որ "համակարգված ծրագիրը" հանդես է գալիս որպես այդ գործընթացի վերջնական հանգրվան:

Այլ պատկեր է ցեղասպանության՝ որպես հասարակագի-

տական նրկայթի ուսումնասիրման բնագավառում: Անցած տասնամյակների ընթացքում ցնդասպանության հայնցակարգը բազմիցս վերանայվել ու լրացվել է մասնագետների կողմից, սակայն, ինչպես իրավագիտորեն նշում է ճանաչված կանադացի ցնդասպանագետ Քուրթ Յոնասոնը, դիտավորության հանգամանքը պահպանել է իր կենտրոնական նշանակությունը որպես ցնդասպանության “հիմնական չափորոշիչ”²³: Այսպես, օրինակ, ցնդասպանության հասարակագիտական բնորոշման մեջ, որը տրվել է Ֆրենք Չոքի և Քուրթ Յոնասոնի կողմից 1990 թ. և հետագայում լայն տարածում է ստացել, մտադրվածությունը պահպանում է իր կենտրոնական նշանակությունը. “Ցնդասպանությունը միակողմանի զանգվածային սպանության ձև է, որով պնտությունը կամ այլ իշխանություն մտադրվում է (intends) ոչնչացնել որևիցե խումբ...”²⁴:

Կարևոր նգրակացությունների է հանգում Ցնդասպանության ուսումնասիրության նյու-յորքյան ինստիտուտի տնօրեն Հելեն Ֆայնը: Ցնդասպանության իր վաղ բնորոշումներից մեկում նա էլ ավելի էր պարզեցրել դիտավորության հանգամանքի բնութագրումը, առաջարկելով այն պարզապես փոխարինել “հաշվարկված” բառով²⁵: Հետագայում նա սկսեց այդ նույն իմաստով օգտագործել “նպատակաուղղված” բառը²⁶: Վերջերս նա հետագա ճշգրտումներ մտցրեց դիտավորության իր բնութագրման մեջ, առաջարկելով ցնդասպանության կարևոր բնորոշիչներից համարել այն հանգամանքը, նրբ որևիցե մարդկային խմբի զանգվածային ոչնչացման քաղաքականություն՝ “սպանության դիտավորությամբ”, ի հայտ է բերում վկայություններ առ այն, թե իշխանությունները “ծրագրել են, կազմակերպել են կամ էլ գիտակցում են” իրենց ցնդասպանական գործողությունները²⁷: Փաստորեն, այս բնութագրման մեջ տեղ են գտել դիտավորության հանգամանքի նրբ դրսևորումներ, որոնք հաճախակի, ինչպես ցույց է տալիս պատմական փորձը, ժամանակային առումով հանդես են գալիս միմյանցից անջատ:

Դիտավորության հանգամանքի վերաձևակերպումների էվոլյուցիայի ուղղվածությունը վերևում հիշատակված հեղինակի, բնութագրական է ժամանակակից ցնդասպանագիտության համար և վկայում է, որ հետազոտությունները այդ բնա-

գալառում ընթանում են դիտավորության հանգամանքի կոնկրետացման ուղղությամբ՝ և իմաստային, և ժամանակային տնսանկյուններից:

Մասնավորապես, ինչպես ընդհանրացնում է իր վերջերս հրատարակած հետաքրքիր դիտարկումներում Հենրի Հաթենբալը, այս ոլորտում հետագա ուսումնասիրությունները տանում են դեպի դիտավորության տարբեր աստիճանների բացահայտում²⁸: Այսպես, օրինակ, Վահագն Դադրիանը դեռևս անցյալ դարի 90-ականներին առաջարկեց “ցնդասպանության պարադիգմայի” հայնցակարգը, որտեղ տարբերազատում է դիտավորության նրկու փուլեր՝ “նախնական” և “վերջնական”²⁹: Դիտավորության հանգամանքի կիրառումը պատմագիտական հետազոտություններում հնարավորություն է ստեղծվում տարբերազատելու *կոտորածը*, ցնդասպանությունից, ինչից հետևում է, որ այդ նրկու նրկվոյթների միջև, հասարակագիտական կամ իրավագիտական տնսանկյունից (բայց, իհարկև, ոչ բարոյական) դատելով, գոյություն ունի որակական տարբերություն:

Համաձայն ցնդասպանագիտության մեջ տարածում ստացած տնսակնտի, կոտորածի պարագայում դիտավորության հանգամանքը բացակայում է³⁰: Ժամանակին Լևոն Չորբաջյանը իրավացիորեն նշել էր, որ կոտորածը արտահայտվում է “վայրի սպանությունների” տնսքով՝ ի տարբերություն ցնդասպանությանը, որի դնպքում առկա է “ծրագրված” լինելու հանգամանքը³¹:

Ինչպես հաճախ է պատահում իրական կյանքում, ծրագրերը մնում են մասնակի կան նույնիսկ լիովին չիրականացված: Սակայն արդեն միայն ծրագրի գոյության փաստի առկայությունը վկայում է, որ տվյալ պնտականությունը մտնել է էվոյուցիայի մի նոր փուլ, որը մենք առաջարկում ենք անվանել նախա-ցնդասպանական

2. Նախացնդասպանական իրավիճակ

Օսմանյան կայսրությունում 1876 թ.

1876 թ. մայիսին Օսմանյան կայսրությունում տնղի ունեցավ բուլղարների դաժան կոտորած: Օգտագործելով ժամանակի դիվանագիտական փաստաթղթերը, այդ թվում նաև

դնեաւ չհրատարակված նյութեր, մենք եկել ենք եզրակացության, որ այն մաս էր կազմում մի պետական ծրագրի, որը իր մեջ պարունակում էր ցնդասպանության մի շարք կարևոր բաղադրիչներ:

Ա. Հիմնական գոհի ընտրություն

Թանգիմաթի բարենորոգումների առաջին փուլի ընթացքում օսմանյան կառավարությունը փորձեց Բուլղարիայում իրականացնել որոշ սահմանակ փնտյթի բարեփոխումներ և այդպիսով կասեցնել բուլղարների ազատագրական շարժման վերընթաց զարգացումը: Սակայն այդ քաղաքականությունը մատնվեց անհաջողության, քանի որ 1850 թ. բռնկվեց լայնածավալ զինված ապստամբություն թուրքական բռնապետության դեմ: Թեև այն հաջողվեց ճնշել միայն մեծ ջանքերի շնորհիվ, օգտագործելով և կանոնավոր բանակը և բաշխեցողներին (զինված ելուզակներին), սակայն իշխանությունները ամեն ինչ արեցին, որ հետո պահեն մահմեդական ազգաբնակչությանը ապստամբների դեմ զինված գործողությունների մեջ ներգրավելուց: Վիդինի վիլայեթի նորանշանակ վալի Ալի Ռեզա փաշային տրվեցին համապատասխան զրավոր ցուցմունքներ³²:

Թանգիմաթի նրկորդ փուլի շրջանքւմ սկզբում իշխանությունները փորձ արեցին Բուլղարիայում կիռարել ազգային հարցում իրենց մշակած նոր՝ «միաժուլման» (թուրքերեն նրանք օգտագործում էին «յառնում ու միացում» [“mezc-ü telifi”] արտահայտությունը, իսկ ֆրանսերեն՝ «միաժուլում» [“fusion”] բառը) քաղաքականությունը, որի նպատակն էր Օսմանյան կայսրության քրիստոնյա հպատակների՝ մահմեդականների հետ իրավունքների հավասարեցման և միասնական «օսմանյան ժողովրդի» ստեղծման քողի ներքո ձեռնամուխ լինել քրիստոնյա ժողովուրդների ուժացման գործընթացին և այդպիսով կասեցնել նրանց ազգային-ազատագրական պայքարի աճը³³: Սակայն այդ քաղաքականությունը նույնպես մատնվեց անհաջողության և ազգային-ազատագրական շարժումը ոչ միայն չթուլացավ, այլ գնալով ձեռք բերեց ավելի մեծ թափ: Հետագայում՝ 1867 և 1875թթ. այստեղ տեղի ունեցան զինված ընդվզումներ թուրքական բռնապետության դեմ, որոնք դաժանորեն ճնշվեցին:

Առաջին վտանգավոր համարվեց վերջինը: Նրա ճնշման նպատակով իշխանությունները օգտագործեցին ոչ միայն բանակային ստորաբաժանումները, այլ նաև ներգրավվեցին մահմեդական ազգաբնակչությանը՝ բաժանելով նրան զենք³⁴: Այս անուղղակի վկայություն է առ այն, որ նրանք նախապատրաստվում էին իրականացնել շատ ավելի լայնածավալ գործողություն, քան թե պահանջվում էր այդ սահմանափակ ապստամբությունը ճնշելու համար: Ուշագրավ է, որ ապստամբությունը ճնշելուց հետո էլ իշխանությունները շարունակում էին ձեռնարկել “ակտիվ միջոցառումներ”, ինչպես նշվում էր Ադրիանապոլիսում բրիտանական փոխ-հյուպատոսի կողմից ստացված հաղորդագրության մեջ. մասնավորապես, նրանք սկսել էին “զինյալների հավաքագրումը”³⁵:

Այս հաղորդագրությունը փաստում է թուրքական իշխանությունների շրջանում լայնածավալ բռնությունների քաղաքականություն իրականացնելու մտադրվածության ձևավորման վաղ փուլը, որը, դեռևս չունենալով “ցնդասպանական դիտավորություն”, միաժամանակ ազդարարում էր “ավանդական” միջնադարյան կոտորածների քաղաքականության՝ ցնդասպանության քաղաքականության վերածման գործընթացի սկիզբը:

Ըստ նրկայի, այդ և նմանատիպ հաղորդագրությունների ազդեցության տակ Կ. Պոլսում գտնվող արտասահմանյան դիվանագետները, գլխավորապես Մեծ Բրիտանիայի դեսպան Հ. Էլիոթը և Ռուսաստանի դեսպան Ն. Պ. Իգնատևը, կանխազգալով բուլղարներին սպառնացող վտանգի հասունացումը, ձեռնարկեցին որոշակի քայլեր, նպատակ ունենալով կասեցնել այդ գործընթացը: Նրանք գործադրեցին ճնշում սուլթան Աբդուլ Ազիզի և մեծ վեզիր Մահմուդ Նեդիմ փաշայի վրա և հորդորեցին կայսրության բարձրագույն ատյաններին այս անգամ ապստամբությունը բարենորոգումների վրա, այլ ոչ թե կիռարել ֆիզիկական բնաջնջման քաղաքականություն³⁶: Սուլթանը հրապարակում է հատուկ հրովարտակ և ազդարարում է բարենորոգումները շարունակելու իր կամքը, իսկ մեծ վեզիրը հեռագիր է ուղարկում վալիներին (կուսակալներին) ու հրամայում է դադարեցնել բրիտանյանների հետապնդումները³⁷:

Ուշագրավ է, որ Մեծ վեզիրի որդեգրած մոտեցման հետ իրենց անհամաձայնությունն են հայտնում և հրաժարական են

տալիս այդ տարիների ականավոր պետական գործիչներ Հյուսնյն Ավնի փաշան և Միդիատ փաշան³⁸: Երկուսն էլ կողմնակից էին Բալկաններում և մասնավորապես Բուլղարիայում բիրթ ուժի օգտագործման վրա հիմնված քաղաքականության³⁹: Հնտագայում, ինչպես ցույց է տրվում ներքևում, այս գործիչները, նորից հայտնվելով կառավարության կազմում, մշակեցին բուլղարներին ոչնչացնելու քաղաքականության ծրագիր:

Ինչպես նրևում է Փիլիպոլիսում թուսական փոխ-հյուպատոսի զեկուցագրից, Հյուսնյն Ավնին ու Միդիատը միայնակ չէին բուլղարների նկատմամբ ֆիզիկական հաշվեհարդարի քաղաքականություն իրականացնելու ցանկության մեջ: Տեղական իշխանությունները և հատկապես զապտիլները⁴⁰ ոչ միայն չէին ննթարկվում մայրաքաղաքից ստացված հրամանին, այլ էլ ավելի էին ուժեղացնում բռնությունները բուլղարների դեմ⁴¹: Նա հատուկ ընդգծում է, որ անսխալադեպ շատացել է զապտիլների կողմից իրականացվող սպանությունների թիվը⁴²:

Ը. Տեղասպանության ծրագիրը

1876 թ. մայիսի նրկրորդ կեսնրից Օսմանյան կայսրության տարբեր քաղաքներում գտնվող և բրիտանական, և թուսական դիվանագետները համարյա միաժամանակյա սկսում են ստանալ տեղեկություններ, որոնք վկայում են, որ այդ նրկրի բարձրագույն իշխանությունները արդեն մշակել էին բուլղարների դեմ գործելու որոշակի ծրագիր և համապատասխան ցուցումներին էին տվել բուլղարական նահանգների տեղական իշխանություններին:

Ադրիանապոլսի բրիտանական փոխ-հյուպատոսի ստացած տեղեկության համաձայն, կառավարության կողմից հանձնարարականներ են ուղարկվել տեղական իշխանություններին, որոնցով ցուցում է տրվել նրանց “ոչնչացնել բուլղարներին” և սպանել վնց տարեկանից ցածր բոլոր արու մանուկներին: Այդ միջոցառումներով, նպատակ է դրվում “բնաջնջել ցեղը (race) և ստիպել մնացածին արտագաղթել”⁴³: Այդ կարևոր տեղեկության աղբյուրն է եղել օսմանյան բյուրեղրատիայի ազգությանը ալբանացի մի ներկայացուցիչ:

Փիլիպոլիսի թուսական փոխ-հյուպատոս Նայդեն Գնեռլին, նրբ նա ժամանակավորապես գտնվում էր մայրաքաղաքում,

օգտագործելով իր անձնական կապերը կառավարության անդամներից մեկի հետ հաջողվել էր ստանալ կարևոր լրատվություն, որը միանշանակորեն հաստատում էր բրիտանացիների տեղեկությունները բուլղարներին բնաջնջելու ծրագրի գոյություն ունենալու մասին և լույս էր սփռում նրա որոշ կարևոր մանրամասների վրա: Ստորելվ ներկայացնում ենք այդ հաղորդագրությունը.

“Թուրքական կառավարությունը որոշում է ընդունել ապստամբության ճնշման պատրվագով ոչնչացնել լիովին բուլղարական այն... բնակավայրերը, որոնց բնակիչները առավել առաջընթաց են ապրել, իսկ մնացյալ գյուղերը ու քաղաքները ափերն էլ բաշխեցողների ասպատակությունների միջոցով, քաղաքային բնակչության լավագույն ներկայացուցիչներին ոչնչացնել այս կամ այն ձևով, բնաջնջել ողջ մտավորականությանը և կենդանի չթողնել Ռուսաստանում կրթություն ստացած ոչ մի ուսուցչի, փակել ուսումնարանները և այնպես ճնշել ժողովրդին, որ նա հնարավորություն չունենա նրբեկից վերականգնվի ու վերադառնա ներկայիս վիճակին, նրբ նա վտանգ է ներկայացնում թուրքների տիրապետության համար, և վերջապես, թուրքացնել նրա մի մասին, որ էլ ափսոսանքով նրան:”⁴⁴

Դժվար չէ նկատել, որ տարբեր աղբյուրներից ստացված այս տվյալները, որոնք տեղ են գտել տարբեր, ավելի ճիշտ, իրար հետ հակամարտող պետությունների պաշտոնական դիվանագիտական փաստաթղթերում, ըստ էության, իրար լրացնում են և հնարավորություն են տալիս եզրակացնելու, որ իսկապես թուրքական կառավարական շրջանակներում գոյություն է ունեցել բուլղարներին՝ որպես էթնիկական խմբի դիտավորությամբ ոչնչացնելու ծրագիր: Այդ ծրագրի ցնդասպանական բնույթը տարակուսանք չի հարուցում:

Հետաքրքիր է համեմատել, թե ինչպես են վարվել Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի դեսպանները իրենց ձեռքն ընկած տեղեկությունների հետ: Ն. Պ. Իգնատևը պարզապես կցել էր Փի-

լիպովիսի փոխ-հյուպատոսից ստացված վերընշված հաղորդագրությունը ցարին ուղարկվող իր գնկուցագրին և ուղարկել այն Պետերբուրգ, այդպիսով հնարավորինս արագ տեղեկացնելով իր կառավարությանը բոլղարներին սպառնացող վտանգի մասին⁴⁵:

Դեսպան Հ. Էլիոթը, որի անձնական բարեկամությունը Միդհատ փաշայի հետ ժամանակակիցների համար գաղտնիք չէր, ըստ էության, չէր վստահել այդ տեղեկություններին և Սալոնիկի բրիտանական հյուպատոսին դիմել էր մեծագույն զգուշավորությամբ ձևակերպված “հատուկ խնդրանքով” (sic!). պարզել, արդյո՞ք մահմեդականների հարձակումները քրիստոնյաների վրա կարող են լինել “նախապես պատրաստված հարձակման” արդյունք⁴⁶: Որքանով կարելի է եզրակացնել հրապարակված բրիտանական փաստաթղթերից, նա՝ այդպես էլ Լոնդոնին տեղյակ չպահեց իր ստացած կարևոր տեղեկության մասին: Դրա պատճառը, կարելի է ենթադրել, այն էր, որ նրան հայտնի էր, որ այդ հրեշավոր ծրագրի հեղինակներից էր Միդհատ փաշան, որը հենց նույն Էլիոթի անվերապահ աջակցությամբ ղեկավարում էր սահմանադրական շարժումը մայրաքաղաքում:

Մինչդեռ ռուսական դիվանագիտությանը հաջողվել էր պարզել, որ բացի Միդհատից այդ ծրագրի հեղինակությունը պատկանում էր նաև վերը նշված Հյուսեյն Ավնի փաշային, իսկ վերջնական որոշումը ընդունվել էր կառավարության նիստի ընթացքում⁴⁷: Ռուս դիվանագետները հայտնում էին, որ կառավարության որոշումը վերաբերում էր ոչ միայն բոլղարների բնաջնջմանը, այլ նաև Բալկանյան թերակղզու ողջ սլավոնական ազգաբնակչության “սիստեմատիկ կոտորելուն”⁴⁸:

Այդ ամիսներին Կ. Պոլսում գտնվող նրիտասարդ ռուս թուրքագետ Վասիլի Սմիռնովը⁴⁹, հենվելով “ստամբուլյան հարաբերություններին լավ ծանոթ մարդկանցից” ստացված տեղեկությունների վրա, տալիս է նրեք թուրք պետական գործիչների անունները, որոնք կազմում էին, ըստ իր բնությանգրման, “բոլղարական սարսափների դժոխքային նրյակը”. նրանք էին բացի Միդհատ փաշայից այդ տարիների խոշոր պետական գործիչ ու ճանաչված բառարանագետ Ահմեդ Վեֆիք փաշան և “նոր օսմանցիների” շարժման առաջնորդներից Ալի Սուավին⁵⁰: Նրանք, ըստ Սմիռնովի, նպատակադրվել էին “սիստեմատիկորեն ոչնչացնել իրենց համար ատելի բոլղարներին և

... համառորեն հետևում են իրենց ծրագրին...⁵¹:

Շարունակելով հետաքրքրվել այդ խնդրով լուսական դիվանագետները կարողացան բացահայտել այդ ցնդասպանական ծրագրի մի շարք այլ մանրամասներ: Համաձայն Ռուսն քաղաքաքի լուսական գլխավոր հյուպատոս Վ. Ֆ. Կոժենիկովի ստացած տեղեկությունների, կայսրության մայրաքաղաքում Միդիատ փաշայի ղեկավարությամբ գործում է գաղտնի կոմիտե՝ “Սյուփյուրգնի” (“Ավնի”) անվանումով: Ըստ այդ տեղեկության, “Սյուփյուրգնի” թիրախը միայն բուլղարները չեն, նրա նպատակն է ոչնչացնել նրկրի ողջ քրիստոնյա ազգաբնակչությանը⁵²:

Այդ ոճրագործ խմբակի գոյության մասին լուսական դիվանագիտությանը հայտնի էր դարձել 1876 թ. նոյեմբերին: Սակայն, ըստ նրկության, այն ստեղծվել էր ավելի վաղ, դեռևս այդ նույն տարվա մայիսին, նրբ կառավարությունը Միդիատի և Հյուսեյն Ավնիի ճնշման ներքո ընդունել էր վերոհիշյալ որոշումը բուլղարներին ոչնչացնելու մասին: Հետագայում, Հյուսեյն Ավնիի սպանությունից հետո (նոյն թվականի հունիսի 15-ին) այն համալրվել էր նոր անդամներով (հայտնի են Վեֆիք փաշայի և Ալի Սուավիի անունները), սակայն, ինչպես վկայում է հաղորդագրությունը “Սյուփյուրգնի” մասին, Միդիատը պահպանել էր իր ղեկավար դիրքը:

Գ. Օսմանյան կայսրության քրիստոնյաների զանգվածային կոտորածի վտանգ

1876 թ. նրկորդ կնսի ընթացքում մահմեդական հոգևորականության հակաքրիստոնեական քարոզչությունը գնալով սաստկանում է: Այդ փաստը արձանագրել է ժամանակի մամուլը⁵³: Հետզհետե այն ընդունում է քրստոնյաներին ֆիզիկական բնաջնջման կոչերի ձև: Այդ փաստը չէր վրիպել լուսական դիվանագետների ուշադրությունից: “Խոջաները”, - գրում էր դեսպան Իզնատևը ցարին, - սկսում են բացեիքաց հանդես գալ “զյավուրներին” ոչնչացնելու կոչերով⁵⁴:

Նկատվում է գործողությունների և քարոզչության որոշակի համակարգում բարձրագույն իշխանությունների և մահմեդական հոգևորականության գործողությունների միջև: Սակայն տարակուսանք չի հարուցում, որ նախաձեռնությունը պատկա-

նում էր կառավարությանը և պատճառը ոչ միայն և ոչ այնքան մահմնդական մոլեռանդությունն էր, որը դարձրեց շարունակ գոյություն ունեւ Օսմանյան կայսրության մահմնդական ազգաբնակչության միջավայրում, այլ նրկրի բարձրագոյն իշխանությունների նոր քաղաքականությունը բուլղարների և այլ քրիստոնյաների նկատմամբ: Այս կարևոր հանգամանքը ընդգծել է դնեսա այդ իրադարձությունների մեզ անհայտ ժամանակիցը՝ դնսպան Իգնատևի անձնական ֆոնդում այլ ձեռագրերի հետ պահվող անստորագիր վերլուծական տեղեկագրի հեղինակը: Նա գրում է. “Առաջներում քրիստոնյաներին ճնշում ու ջարդում էին մահմնդականները, այժմ նրանց ճնշում ու ջարդում է կառավարությունը”⁵⁵: Այդ տեսակետը կիսում էր նաև Իգնատևը: Պետերբուրգ ուղարկած իր գնկուցադրերից մեկում նա ընդգծում է, որ ուժեղացող մահմնդական մոլեռանդության պատճառը թուրքական կառավարման համակարգի ներկայացուցիչների մեծ մասի գործողություններն են՝ ամենավերևում գտնվողից մինչև ամենաստորինը⁵⁶:

Կարելի է արձանագրել, որ ամռան և աշնան ամիսներին ընթացքում ոճրագործ խմբակի ծրագրերը ընդլայնվել էին և նրանք սկսել էին նախապատրաստել կայսրության ողջ քրիստոնյա ազգաբնակչության զանգվածային կոտորած: Դրա մասին է վկայում ոչ միայն Վ. Ֆ. Կոժնիկովի վերընշված հաղորդագրությունը: Դնեսա հոկտեմբերին Ռուսաստանի Իգնատևը հաղորդում էր Ալեքսանդր Գորչակովին, “որ լիովին հիմնավորված է վախը ներքին կոտորածներից”⁵⁷:

Փաստերը վկայում են, որ 1876 թ. վերջին ամիսներին թուրքական իշխանությունները պատրաստվում էին կազմակերպել լայնածավալ կոտորած նաև հայ ժողովրդի դնմ: Արդեն հոկտեմբերի սկզբներին հայկական մամուլը արձանագրեց հայերի դնմ ուղղված մահմնդական մոլեռանդության ուժեղացման փաստը, միաժամանակ զգուշորեն ննթադրելով, որ այդ տեղի է ունենում տեղական իշխանությունների թողտվության պայմաններում⁵⁸: Նույն ժամանակահատվածում թուրքական մամուլը, մասնավորապես կառավարության շեփորը հանդիսացող “Բասիրեթ” լրագիրը, մեղադրում է հայերին, թն իբր նրանք՝ Պոլսի պատրիարքի ղեկավարությամբ նախապատրաստում են զինված ապստամբություն⁵⁹, այդպիսով հող նա-

խապատրաստելով նրանց կոտորածի համար:

Ռուսական դիվանագիտական աղբյուրները հնարավորություն են տալիս պատկերացում ստանալ այդ ծրագրի որոշ մանրամասների մասին: Հոկտեմբերին Գորչակովին հղած իր զեկուցագրերից մեկում Իզնատևը, հենվելով Պոլսո հայ պատրիարքի կողմից իրեն հայտնած տեղեկության վրա, գրում է, որ Միդիատը մեղադրել է հայերին, թե իբր նրանք մեծ քանակությամբ զենք են զենլ արտասահմանում և նախապատրաստում են ապստամբություն Ռուսաստանի հետ սահմանամերձ շրջաններում, որպեսզի “ապահովեն Ռուսաստանի միջամտությունը”⁶⁰:

Այսպիսով, կարելի է նգրակացնել, որ կոտորածը իրականացվելու էր հենց այդ պատրվակով: Նմանությունը “նրիտասարդ” կամ “նոր” օսմանցիների” առաջնորդի և նրիտությունների պարագլուխների գործելակերպի միջև ակնառու է: Հետաքրքիր է նշել, որ Ռուսաստանի գործոնը մեծ դեր է խաղացել նաև Միդիատի հակաբուլղարական ծրագրերում: Իզնատևի զեկուցագրերից մեկում բերված են Միդիատ փաշայի հետևյալ խոսքերը, ուղղված բուլղարների ներկայացուցիչներին. “Դուք ձեր հույսը դնում եք Ռուսաստանի վրա, սակայն նրբ նա վերջիվերջո կգա, նա կգտնի միայն ավերակներ”⁶¹:

Նոյեմբերի վերջերին Կ. Պոլսի ռուս դեսպանը մեկ անգամ ևս հայտնեց Պետերբուրգին, թե հյուպատոսները հաղորդում են, որ Օսմանյան կայսրության ողջ տարածքի վրա շարունակվում է քրիստոնյաների «աղաղակող ճնշումը», ընդ որում, ոչ միայն սլավոնների, այլ նաև “Փոքր Ասիայի քրիստոնյաների”⁶²:

Ահա այս պայմաններում էր, որ տեղի ունեցավ Վանի դեկտեմբերի 1-ի հայտնի հրկիզումը, կազմակերպված տեղի թուրքական իշխանությունների կողմից: Այդ իրադարձությանը հայրենական պատմագիտությունը բազմիցս անդրադարձել է, սակայն դիտարկել է այն որպես մեկուսի նրկույթ: Մինչդեռ, ինչպես վկայում է իր կոնֆիդենցիալ զեկուցագրում Իզնատևին վերջինիս գաղտնի գործակալ Պ. Անինոն, որը Միդիատի օգնականն էր և անձնական թարգմանիչը և այդպիսով լավատեղյակ էր նրկրի անցուցարձից, այդ թվում, նաև այնպիսի իրադարձություններից, որոնք իշխանությունները պահում էին գաղտնի, համարյա միաժամանակ թուրքական կանոնա-

վոր բանակը իրականացրեց “զազանություններ Յոզդատի հայկական գյուղերում”⁶³: Անտարակույս, բանակը ստացել էր համապատասխան հրաման: Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ հայերի դեմ նախապատրաստվող կոտորածի վտանգը բավական իրական էր:

Այսպիսով, կարելի եզրակացնել, որ 1876 թ. Օսմանյան կայսրությունը մոտ էր կանգնած ժամանակակից հասկացողությամբ լայնածավալ ցեղասպանություն իրականացնելու գործընթաց սկսելուն: Առկա էին ոճրագործը՝ ի դեմս պետական բարձրատիժան գործիչների բաղկացած մի խմբակի, զոհը՝ բուլղարները, ցեղասպանություն իրականացնելու դիտավորությունը՝ արտահայտված այդ ոճրագործ խմբակի կողմից նախապատրաստած ցեղասպանության ծրագրի տեսքով: Նախատեսնվում էր, բարենպաստ պայմանների դեպքում, իրականացնել նմանատիպ գործողություններ նաև կայսրության այլ քրիստոնյա ժողովուրդների դեմ, մասնավորապես՝ հայերի դեմ: Սակայն բարենպաստ պայմաններ չստեղծվեցին: Իր էությամբ ցեղասպանական ծրագիրը իրականացվեց միայն մասամբ: Բուլղար ժողովուրդը փրկվեց զանգվածային բնաջնջումից: Այլ խոսքերով ասած, նախա-ցեղասպանական իրավիճակը չվերաճեց ցեղասպանության: Այդ տեղի ունեցավ ավելի ուշ՝ սուլթան Աբդուլ Համիդի անմիջական ղեկավարությամբ, նրբ 1890-ականների լայնածավալ կոտորածներով սկիզբ առավ Հայոց ցեղասպանության շուրջ նրկու տասնամյակ տևած գործընթացը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. R. Lemkin. Axis Rule in Occupied Europe. Washington, 1944.
2. Տե՛ս այդ մասին L. Kuper. Genocide: Its Political Use in the Twentieth Century. New Haven and London, 1981, p. 22: Ըստ նրեւույթի, Քուփըրը օգտվել է մեղադրական ակտի անգլերեն տարբերակից:
3. Տե՛ս այդ փաստաթղթի արխիվային բնագրի հրատարակված տեքստում Нюрнбергский процесс: Сборник материалов в 8-ми томах, Москва, 1987, с. 293.
4. J. N. Porter. Introduction: What is Genocide? Notes Toward a Definition. - In: Genocide and Human Rights: A Global Anthology. Ed.

by J. N. Porter. Lanham-New-York-London, 1982, p. 5.

5. *Raphael Lemkin on Genocide*. - In: *Genocide and Human Rights: A Global Anthology*. Ed. by J. N. Porter. Lanham-New-York-London, 1982, p. 317.

6. Տնն աղ մասին V. N. Dadrian. The Convergent Aspects of the Armenian and Jewish Cases of Genocide. A Reinterpretation of the Concept of Holocaust. - *Holocaust and Genocide Studies: An International Journal*. 1988, Vol. 3, No. 2, p. 163.

7. *Raphael Lemkin on Genocide*. - In: *Genocide and Human Rights: A Global Anthology*. Ed. by J. N. Porter. Lanham-New-York-London, 1982, p. 317.

8. Ibid, p. 330.

9. Մեջբերումն ըստ L. Kuper. *Genocide: Its Political Use...*, p. 23.

10. J. H. Tashjian. *Genocide, the United Nations and the Armenians*. - In: *Genocide and Human Rights: A Global Anthology*. Ed. by J. N. Porter. Lanham-New-York-London, 1982, p. 134.

11. Մեջբերումն ըստ Ю. А. Решетов. *Борьба с международными преступлениями против мира и безопасности*. Москва, 1983, с. 102.

12. Անգլերեն պաշտոնական տեքստը տես. *Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide A/RES/260 A (III), 9 December 1948*. - In: *The United Nations: Blue Books Series, Volume VII: The United Nations and Human Rights, 1945-1995*. With an introduction by Boutros Boutros-Ghali, Secretary General of the United Nations. New York: Department of Public Information, United Nations, 1995, p. 151-153.

13. *In favor of the Ratification of the Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide*. Presented to The Subcommittee on the Genocide Convention of the Senate Foreign Relations Committee. - *Armenian Affairs: A Journal on Armenian Studies*, 1950, Vol. 1, No. 2, p. 221.

14. Տնն աղ մասին L. A. Chorbajian. *Massacre or Genocide: An Essay in Personal Biography and Objective Experience*. - In: *Genocide and Human Rights: A Global Anthology*. Ed. by J. N. Porter. Lanham-New-York-London, 1982, p. 121.

15. *Introduction by Boutros Boutros-Ghali, Secretary General of the United Nations*. - In: *The United Nations: Blue Books Series, Volume VII: The United Nations and Human Rights, 1945-1995*. With an introduction by Boutros Boutros-Ghali, Secretary General of the United Nations. New York: Department of Public Information, United

Nations, 1995, p. 21.

16. *Leo Kuper*, Genocide: Its Political Use in the Twentieth Century. New Haven and London, 1981, p. 33-35.

17. Տնն. *Frédéric Guillaume Dufour*, Toward a Socio-historical Theory of Persecution and an Analytical Concept of Genocide. - YCISS Occasional Paper, Nr. 67, October 2001, p.13.

18. Այս խնդիրը մանրամասն ուսումնասիրել է Յու. Բարսեղովը. Տնն. *Ю. Г. Барсегов*, Геноцид армян преступление по международному праву. Москва: Издательский дом "XXI век — Согласие", 2000, с. 93-121. Ինքը Բարսեղովը նրկրորդ դպրոցի ներկայացուցիչ է:

19. Տնն այդ մասին. *Cecile Tournaye*, Genocidal Intent before the ICTY. - International and Comparative Law Quarterly, April 2003, vol. 52, no. 2, pp. 447-462

20. Տնն այդ փաստաթղթի տեքստում. *Security Council resolution containing the decision to establish an international tribunal for the prosecution of persons responsible for genocide and other serious violations of international humanitarian law committed in Rwanda or in the territory of neighbouring States S/RES/955 (1994), 8 November 1994.* - In: The United Nations: Blue Books Series, Volume VII: The United Nations and Human Rights, 1945-1995. With an introduction by Boutros Boutros-Ghali, Secretary General of the United Nations. New York: Department of Public Information, United Nations, 1995, p.490.

21. Տնն այդ փաստաթղթի տեքստում. *Franc Chalk and Kurt Jonassohn*, The History and Sociology of Genocide: Analyses and Case Studies. New Haven and London, 1990, p. 51.

22. Տնն այդ մասին. *Uwe Makino*, Final Solutions, Crimes Against Mankind: on the Genesis and Criticism of the Concept of Genocide. - Journal of Genocide Research, 2001, 3(1), p. 67.

23. *Kurt Jonassohn*, Defining the Perpetrator: Seeking Proof of Intent. - MIGS Occasional Paper, March 1993, p. 1.

24. *Franc Chalk and Kurt Jonassohn*, The History and Sociology of Genocide: Analyses and Case Studies. New Haven and London, 1990, p. 23.

25. *Helen Fein*, Testing Theories Brutally: Armenia (1915), Bosnia (1992) and Rwanda (1994). - Problems of Genocide: Proceedings of the international Conference on "Problems of Genocide", April 21-23, 1995, National Academy of Sciences, Yerevan, Republic of Armenia. Cambridge, MA, 1997, p. 182.

26. *Ibid.*, p. 181.

27. *Helen Fein*, Denying Genocide: From Armenia to Bosnia: A

lecture delivered at the London School of Economics and Political Science on 22 January 2001. – London School of Economics and Political Science: Occasional Papers in Comparative and International Politics 1. London: Department of Government, [2001], p. 4-5.

28. *Henry R. Huttenbach*, From the Editor: Towards a Conceptual Definition of Genocide. – *Journal of Genocide Research*, 2002, 4(2), p. 167–176.

29. *Vahakn N. Dadrian*, Towards a Theory of Genocide: Incorporating the Instance of Holocaust: Comments, Criticisms and Suggestions. – *Holocaust and Genocide Studies*, 1990, Vol. 5, No. 2, p. 143.

30. Տես, օրինակ. *Christian P. Scherrer*, Towards a Theory of Modern Genocide. Comparative Genocide Research: Definitions, Criteria, Typologies, Cases, Key Elements, Patterns and Voids. – *Journal of Genocide Research*, 1999, 1(1), p. 15.

31. *L. A. Chorbajian*. Massacre or Genocide: An Essay in Personal Biography and Objective Experience. – In: *Genocide and Human Rights: A Global Anthology*. Edited by *J. N. Porter*. Lanham-New-York-London, 1982, p. 121.

32. Տես սուլթանի կողմից Ռ-ըզա փաշային տրված “թարծրագույն ցուցմունքները” պարունակող փաստաթղթի տեքստում, որը հրապարակել է թուրք ճանաչված միջնադարյան Հալիլ Ինալչըրը. Ferikan-ı kiramdan bu def'a memuriyet-i mahsusa ile Vidin canibine izam buyrulacak Rıza Paşa hazretlerine talimat-ı seniyye müsvedesi. – Halil Inalcık, *Tanzimat ve Bulgar Meselesi (Doktora Tezi'nin 50. yılı, 1942-1992)*. İstanbul, 1992, Vesikalar V, s. 124.

33. Ավելի հանգամանալից այդ քաղաքականության բնութագրմանը անդրադարձել ենք հետևյալ հոդվածում. *Ռ. Ա. Մաքրաստյան*, Օսմանացման քաղաքականության պատմությունից. – Արևելագիտության հարցեր. Գիտական աշխատությունների միջբուհական ժողովածու, Պրակ 1-2, Երևան, 1983, էջ. 193 – 202:

34. Н. Геров – Н. П. Игнатьеву, 22 марта 1876 г. Приложение. – *Документи за българската история*. Т. 2: Архив на Найден Геров. Ч. 2, София, 1932, с. 153.

35. Տես այդ մասին. Rev. J. Clarke to British Vice Consul in Adrianople J. H. Dupuis, October 15, 1875. – In: *The Near and Middle East, 1856-1914 Part I*: British Documents on Foreign Affairs. Series B: Near and Middle East, Volume 2: The Ottoman Empire: Revolt in the Balkans, 1875-1876. Editor: *D. Gillard*. Bethesda, 1985, p. 137-138.

36. Տես այդ մասին. *Roderic Davison*, Reform in the Ottoman Empire, 1856-1876. Princenton, 1963, p. 315-317; Записки графа Н.

П. Игнатьева. — Исторический вестник, 1914, т. 135, с. 454.

37. Н. Геров — Н. П. Игнатьеву, 3 ноября 1875 г. — *Документи за българската история*. Т. 2 : Архив на Найден Геров. Ч. 2, София, 1932, с. 126.

38. Խորը այն նույն Միդхատ փաշայի մասին է, որը համարվում է օսմանյան առաջին սահմանադրության «կնքահայր»:

39. Sbu. Roderic Davison, Reform., p. 317; И. Е. Фадеева, Мидхат-паша : Жизнь и деятельность. Москва, 1977, с. 71.

40. Այդպես էին անվանվում ոստիկանական զինված ստորաբաժանումների անդամներին:

41. Н. Геров — Н. П. Игнатьеву, 3 ноября 1875 г. — *Документи за българската история*. Т. 2 : Архив на Найден Геров. Ч. 2, София, 1932, с. 126.

42. Նույն տեղում:

43. J. H. Dupuis to H. Elliot, May 19, 1876. — In: *The Near and Middle East, 1856-1914 Part I: British Documents on Foreign Affairs*. Series B: Near and Middle East, Volume 2: The Ottoman Empire: Revolt in the Balkans, 1875-1876. Editor: D. Gillard. Bethesda, 1985, p. 234.

44. Вице-консул в Филипполе - Послу в Константинополе, 17 мая/29 мая 1876г., копия, прил.к предыд. — Архив Внешней Политики России (АВПР), ф. Канцелярия МИД, 1876, д. 25, лл. 159об — 160. Գնումի անձնական արխիվում պահպանվել է այդ փաստաթղթի մեկ այլ օրինակ, որը ժամանակին հրատարակվել է Բուլղարիայում : Այն էականորեն չի տարբերվում Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվում պահվող օրինակից: Sbu. Доклад Герова. Константинополь, май 1876г. - *Документи за българската история*. Т. 2 : Архив на Найден Геров. Ч. 2, София, 1932, с. 168-169.

45. Игнатьев - Царю, 21 мая/2 июня 1876г. - АВПР, ф. Канцелярия МИД, 1876, д. 25, лл. 148 - 154.

46. H. Elliot to J. E. Blunt. — In: *The Near and Middle East, 1856-1914 Part I: British Documents on Foreign Affairs*. Series B: Near and Middle East, Volume 2: The Ottoman Empire: Revolt in the Balkans, 1875-1876. Editor: D. Gillard. Bethesda, 1985, p. 238.

47. Вице-консул в Филипполе - Послу в Константинополе, 17 мая/29 мая 1876г., копия, прил.к предыд. — АВПР, ф. Канцелярия МИД, 1876, д. 25, лл. 159об.

48. Из донесения Н. Даскалова (Варна) генеральному консулу России в Русе В. Т. Кожевникову, 24 августа 1876 г. — В кн.: *По следите на насилието*: Документи и материали за на-

лагане на ислам. Част първа. Съставител *Петър Петров*, София, 1987, с. 184.

49. Վերադառնալով հայրենիք, Վ. Սմիռնովը ծավալեց բնօրինակ գիտա-մանկավարժական գործունեություն և դասվեց ժամանակների շարքին: Նրա գիտական գործունեության ու պատմագիտական հայացքների մասին տես. *А. С. Твертинова*. В. Д. Смирнов - историк Турции (К 125-летию со дня рождения). - Советская тюркология, 1971, 4, с. 103-114.

50. *В. Смирнов*, Официальная Турция в лицах. Stambul und das moderne Türkenthum. Politische, sociale und biographische Bilder, von einem Osmanen, Leipzig, 1877. - Вестник Европы, 1878, кн. 1, с. 311.

51. Նույն տնդում:

52. В. Ф. Кожевников - Н. П. Игнатьеву, 12 ноября 1876 г., Приложение. - Освобождение Болгарии от турецкого ига: документы в трех томах. Том первый: Освободительная борьба южных славян и Россия, 1875-1877. Под ред. *С. А. Никитина*, *В. Д. Конобеева*, *Ал. К. Бурмова*, *Н.Т. Тодорова*. Москва, 1961, с. 501.

53. Տես, օրինակ. *Մերոյ Հայաստանի*, 3 հուլիսի 1876:

54. Игнатьев-Царю, 21 мая/2 июня 1876г. - АВПР, ф. Канцелярия МИД, 1876, д. 25, л. 153об

55. "Записка (без подписи) "О смысле кризиса, происходящего в настоящее время в Турецкой империи и о влиянии происходящих в ней реформ на ее государственный строй". - Государственный Архив РФ (ЦГАОР СССР), ф. 730 (фонд Н.П.Игнатьева), оп. 1, ед. хр. 706.

56. Игнатьев-Горчакову, 18/30 октября 1876г. - АВПР, ф. Канцелярия, 1876, д. 32, л. 150.

57. Игнатьев-Горчакову, 13/25 октября 1876г. - АВПР, ф. Канцелярия, 1876, д. 32, л. 27.

58. Տես. *Մերոյ Հայաստանի*, 2 հոկտեմբերի, 1876:

59. Այդ մասին հաղորդում էր նույն *Մերոյ Հայաստանի* լրագիրը իր հոկտեմբերի 23-ի համարում, հղելով Պոլսո "Նորագիրը":

60. Игнатьев-Горчакову, 18/30 октября 1876г. - АВПР, ф. Канцелярия, 1876, д. 32, л. 137об - 138.

61. Игнатьев-Гирсу, 24 мая/5 июня 1876г. - АВПР, ф. Канцелярия МИД, 1876, д. 25, л. 153об.

62. Игнатьев-Горчакову, 18/30 ноября 1876г. - АВПР, ф. Канцелярия, 1876, д. 32, л. 539-539об.

63. П. Анино - Н. П. Игнатьеву, 1876. - Государственный Архив РФ, ф. 730 (фонд Н.П.Игнатьева), оп. 1, ед. хр. 917.

**РЕМ КАЗАНДЖЯН, СМБАТ АЗНАУРЯН,
ДИАНА ГРИГОРЯН**

**НЕКОТОРЫЕ АСПЕКТЫ РАССМОТРЕНИЯ
АРМЯНСКОГО ВОПРОСА НА ПЕРЕГОВОРАХ В
БРЕСТ-ЛИТОВСКЕ (1918г.)***

Вопреки распространенному мнению, будто требование об отторжении в пользу Турции территорий, занимаемых Россией с 1878г. по Сан-Стефанскому русско-турецкому и многостороннему Берлинскому договорам, было выдвинуто странами Четверного союза только на последней стадии переговоров в Брест-Литовске (1918г.), вопрос, как свидетельствуют многочисленные документы того времени, был фактически предreshен еще задолго до этого, и включение его в последний ультиматум стран Четверки от 21(8) февраля 1918г. есть всего лишь тактический прием, обусловленный соображениями постепенного наращивания требований в целях добиться подписания кабального для противоположной стороны договора.

Так, еще 29 января 1913г. германский посол в Турции - Вангенгейм в одном из своих писем заверял, что «Германия никогда не позволит России оказывать давление на Турцию. Об этом было бы наивно и думать. Для того, чтобы предоставить свободу действия кабинету Сазонова, Германия никогда не согласится принести в жертву свои интересы в Анатолии. Ни сейчас, ни в будущем мы никому не позволим положить руку на Анатолию»¹. Через полтора года, 6 августа 1914г., в доверительном письме, адресованном великому визирю Мехмеду Сеид Халим-паше, он вновь подтверждает, что «Германия не заключит никакого мира без того, чтобы османские территории, которые, возможно, были бы заняты неприятельскими войсками, были эвакуированы... Германия заставит поправить восточные границы оттоманской империи таким образом, чтобы обеспечить непосредственное соприкосновение Турции с живущим в России мусульманским населением... Германия использует все свое влияние для того, чтобы Турция получила подобающее возмещение в качестве компенсации за

свои потери»². Компенсацией должны были стать Карсская и Батумская области, Тифлис, Тавриз, Каир. При этом в письме оговаривалось, что Германия окажет свои «добрые услуги» Турции лишь в том случае, если они выйдут победителями из нынешней войны «и будут в состоянии продиктовать свою волю воюющим сторонам»³. В другой раз Вангенгейм снова подтверждает, что Германия брала на себя обязательство «не заключать мира до тех пор, пока вся территория Османской империи не будет освобождена от вражеских войск» и будет «добиваться изменения турецкой восточной границы таким образом, чтобы Турция смогла войти в прямую связь с мусульманскими элементами не только в Закавказье, но и в России»⁴.

Все это, несомненно, толкало Турцию к еще большему единению с Германией в осуществлении своих и немецких империалистических планов. Тем более, что впоследствии так же, как явствует из официальных документов кайзеровской Германии от 28 сентября 1916 и 27 ноября 1917г., она брала на себя обязательство «не подписывать ни одного соглашения» в ущерб Турции, чем открывались новые горизонты для действий младотурок на Кавказе⁵.

Помощь Турции со стороны Германии обуславливалась также боязнью последней потерять власть над отчуждаемыми территориями. По словам теоретика пангерманизма Пауля Рорбаха, такой исход был бы «концом Германии как мировой державы, исключением ее из ранга первоклассных держав», ибо «германское будущее на Востоке в Малой Азии, Сирии, Месопотамии и Палестине». С другой стороны, обладание Арменией давало России возможность господствовать над всей Малой Азией - от Персидского залива до Средиземного моря. Более опасной позиции для Германии, по словам Рорбаха, не существовало, а поскольку Турцию надо было поддерживать во что бы то ни стало, то и Армения ни в коем случае не должна была отойти к России⁶. Таким образом, с точки зрения Турции, Армения была препятствием, лежащим «на пути объединения двух половин тюркского народа», которое Турция хотела устранить «посредством прямого уничтожения и физического истребления клином врезавшегося в турецкое море армянского населе-

ния как Турции, так и Закавказья»⁷.

